



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ  
ՅԱԹԻՆՍ ԵՒ Ի ԶՄԻՆՈՒՆ

ՀԱՆԳԵՐՉ

ԳԻՏՈՂՈՒԹԵԱՄԲԻՐ

ՆԿԱՐԱԳՐԵԱԼ

Ի Յ. ԳՈՐԳԵՆԷ




Ի ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1881

ԼԵՆ  
✓ 483

1999



25/11

George Washington - 2. 21/11/1789

George Washington

30 Aug. 1882

George Washington

John Adams

Eng. Washington

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ


ՅԱԲԻՆՍ ԵՒ Ի ԶՄԻՈՒՆ

ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

ՅԱԹԷՆՍ ԵՒ Ի ԶՄԻՒՌՆ

ՀԱՆԴԵՐԶ

ԴԻՏՈՂՈՒԹԵԱՄԲԲ



ՆԿԱՐԱԳՐԵԱԼ

Ի Յ. ԳՈՒՐԳԵՆԷ



Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1881

ՀՖ. 484

4483-60

## Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն

Զայս Նկարագիր ուղեւորութեան խնոյ յԱթենս եւ  
ի Զմիւռիկն, դրոշմեալ յութ թերթս լրագրին  
Մասսի, ըստ խնդրելոյ բարեկամաց բազմաց,  
որք ըղձային ունել զսա ամփոփ առ իւրեանս,  
կամ եղեւ ինձ հանել միւսանգամ ի լոյս յայսմ  
առանձինն մատենկան . եւս եւ վասն հեշտի  
ընթերցանելեաց սորին առ յապայս :

ՅՐԻՆԻՉՆ

Ա. Ռ.

ՈՒՍՈՒՄՆԱԻԱՐՏ ԱՇԱԿԵՐՏՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ

Պարոնայս՝

ԲԸՐԱՎԱՏԱԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ, ԳԱՓԱՄԱՃԵԱՆ ԶԳՕՆ,  
ԵԱՎՐՈՒԵԱՆ ՆԱՍԻՊ, ԹՕՔԱԹԻԼԵԱՆ ԽԱԶԻԿ,  
ԿԻԼԻՍԱՆԵԱՆ ՄԵԼՔՈՆ, ՎԱՐԴԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՖԱՍՈՒԼԵԱՃԵԱՆ ՍՏԵՓԱՆ.

Սիրելի սանունք իմ,

Մինչ դուք յայսմ ժամու հանդիսապէս  
հրաժեճ կուսայք յուսումնական ֆառամեայ  
ընթացից, զոր բոլորեցիք ի Հայկական Կրթա-  
րանի ընդ խնամով ձեր վասակաբեկ դաս-  
փարակին, զայս փոքրիկ մասեանն կը սես-  
նէք նուիրեալ ի նմանէ ձեր ֆաղցրիկ ան-  
ուանց, որ անհնանալի յիշատակաւ *դրուեալ*  
են յիրում արքի :

Կը բաղձայի , եթէ հնար էր , ոսկեղէն  
եփանցանոց զարդարել զկուրծս ձեր , զորս ընդ  
երկար հակեցիք դպրոցական գրասեղանաց  
վերայ , եւ զորոց կը զգայի յանախ բարա-  
խելն ի սուրբ նախանձ ուսման եւ յառա-  
ջադիմութեան . բայց ձեր դաստիարակն որ ,  
ա՛յնքան փրամբք , այնքան սփութեամբք հան-  
դերձ , ոչ ինչ էր շահած բաց ի ձէնջ , զայս  
մատենիկն եւեթ կարող եղեւ նուիրել ձեզ  
զայս յետին նուագ ի վարձ ձեր եռանդնոց  
աշխատասիրութեան , որով պիտի պանծայք  
լինել ընդ հուպ « ձեմարիտ ուսումնականս  
եւ համեստ ֆաղափայիս » :

Իսկ ազգն զձեզ կ'ընդունի յինէն ի նուէր ,  
զձեզ՝ որոց նման բիւրուց է կարօս : Հպարտ  
է ի ձեզ ձեր դաստիարակն , հպարտ է ասե-  
լով՝ թէ որ ինչ գանձք մեծասան հազիւ  
կարէին ածել յարդիւնս , պատրաստել զձեր  
նմանիս , զնո՛յն կարաց առնել ինքն միայ-  
նակ՝ ոչ թէ անձին ինչ ի փառս , այլ յօգուտ  
հանրութեան ազգիս եւ յօրինակ որոց կա-  
րենն եւ ոչ կամին :

Եւ եթէ դուք , ազնիւ սանունք իմ , կամիք  
հասուցանել փոխարէն ինչ ձեր դաստիարա-  
կին բազմաշխատ ջանից . — եւ կը հաւատա-  
թէ բունն է ի ձեզ զգացումն երախտագի-  
տութեան . — քար մ'աւելի զետեղէիք ի շին-  
ուածս լուսոյ տանարին , ընդ որով միայն  
հնար է կեալ մեր ազգին եւ յինել ի համա-  
րի ազգաց . Յայնժամ ամբաւ գոհութեամբ  
եւ խնդութեամբ պիտի լնուք զանձնանուէր

դաստիարակ ձեր

**Ե. ԳՈՒՐԳԷՆ**

Ի 12/24 յուլիսի 1881

յՕրբափէոյ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ - Տ Ն Օ Ր Է Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ.

1/13 մայիս 1881 յՕրժարէօյ ի Հայկ. Կրթարանի

Խմբագրապետ Տէր,

Յօժարութեամբ կ'ընդունիմ Ձեր հրաւերն որով կը պատուէք զիս, և կը յղեմ Ձեզ անա մի համառօտ նկարագիր այն կարճատև ուղեւորութեան զոր կատարեցի յերեքտասանօրեայ ժամանակի յԱթէնս և ի Չմիւռին : — Բազմաց թերևս հասնելի թուին իմ տեղեկութիւնք զոր կը բերեմ Ձեզ խնամով, տեղեկութիւնք՝ որ կարեն անօգուտ չլինել նաև ամէն կարգի ընթերցողաց :

Մնամ յարգանօք

Յ. ԳՈՒՐԳԷՆ (\*)

(\*) Գոհ եմք որ Տիար Յ. Գուրգէն փութացած է մեր հրաւերին պատասխանել՝ ի ստորեւ տեսնուելիք ընտիր գրութիւնք զրկելով մեզ : Հեղինակն, որպէս ամէն ընթերցող պիտի հասկնայ անմիջապէս, իւր այս աշխատութեան մէջ զգուշացած է ամէն քաղաքական խորհրդածութիւններէ, և իւր տեսութիւնները սահմանափակած է պատմական, աշխարհագրական, բանասիրական եւ կրթական շրջանակաց մէջ : Ծ. Խ.

# ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ

## ՅԱԹԷՆՍ ԵՒ ԻԶՄԻՆՈՒՆ

### Մ Ա Ս Ն Ա .

#### ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մասն առաջին. — Արէնք.

Յաւելուած. — Ի Պիրէոնէ ցՋմիւրին.

Մասն երկրորդ. — Ջմիւրին.

Դիտողութիւնք (ի ներքոյ հասուածոց):

ՅԱԹԷՆՍ. Պիրէոն. — Դիրք, փողոցք եւ հասարակային շինուածք Արենայ. — Հնուքիւնք. — Թանգարանք հնուքեանց. — Ակադեմիա. — Համալսարան. — Երկրորդական եւ նախնական դպրոցք. — Ազգային մասեմադարան. — Այլ եւ այլք. — Ուսումնական եւ բարեգործական հաստատութիւնք. — Կրթական ընդհանուր վիճակ Յունաստանի:

### Պ Ի Ր Է Ո Ն

Պիրէոն փոքր քաղաք մ'է Աթենայ ծովածոցին վերայ եւ ապահովագոյն նաւահանգիստ մ'ունի բոլորաձեւ , յորում աւելի քան զհարիւր նաւք կարեն խարխոխ ընկենուլ: Քաղաքն համայն կը տարածի հարթ տեղոյ մի վերայ՝ ի հարաւոյ եւ յարեւմտից ծովահայեաց , որով դիրք տեղոյն , Աթենայ գրից համեմատութեամբ , առաւել հովատուն է եւ առողջարար: Կ. Պոլ-

սոյ Գասար-քէօյնն կը նմանի այս քաղաքն ,  
 յորում տուն , պանդոկ , գործարան , վաճա-  
 ւանոց և այլ հասարակային հաստատութիւնք  
 ընդ ամենայն երեք հազարի չափ շինուածք  
 կան լայն և բարեշէն փողոցաց վերայ . կը հա-  
 ւաստեն թէ 30 տարի յառաջ գրեթէ ոչինչ  
 կայր անդ . բնակչաց թիւն է իբր քսան հազար ,  
 յորոց վեց հազարն եւրոպացի գաղթականք են  
 բնակութիւն հաստատած անդ ի քսան ամաց  
 հետէ : Բազմաթիւ գործարանք կան ի հիւսի-  
 սային-արեւմտեան կողմն քաղաքին , և ի ծա-  
 գել արչալուսոյ՝ ծուխ սեռու և թանձր կը պա-  
 տէ դերկնաւ , որպէս դիտեցի միանգամ : Բաց  
 ի ցորենոյ շոգեշարժ սոգորեաց , որ չեն նուազ  
 թուով քան դաանն , կան նաև կտաւի , երկա-  
 թոյ , ատաղձի , թղթոյ , ասղան , ծխախոտի և  
 այլ զանազան նիւթոյ գործարանք՝ ոչինչ պա-  
 կաս քան զլիսուն : Պետութեան զինուորական  
 վարժարանն , զօրանոցն , երկրորդական դըպ-  
 րոցն , մեծատանց ոմանց ապարանք , եկեղեցիք ,  
 հիւպատոսարանք և այլ հասարակային շքեղ  
 շինուածք գեղեցիկ իմն կը յարգարեն զՊիրէոնն ,  
 որ նախագաւիթն է Աթենայ , յոր պիտի եր-  
 թամք ընդ հուպ :

Կրկին ուղիք կը ձգին ի Պիրէոնէ ցԱթէնա .  
 մին սալարկն (շօսէ՛) իբր տասն հազարամէդր  
 երկայնութեամբ , և միւսն երկաթուղին երկո-

տասան հազարամէդր երկայնութեամբ , զոր  
 կը հատանէ կառախումբն իբր ի քառորդ ժա-  
 մու : Ես ընտրեցի զառաջինն գնալ կառօք ընդ-  
 սալարկն , որ կ'անցանէ ընդ արտօրայս , ընդ  
 դալարաւէտ մարդս և ընդ հոծ ձիթենիս ,  
 մինչև ի հարաւային կողմնն Աթենայ , ի մուտ  
 քաղաքին :



ԴԻՐՔ , ՓՈՂՈՑՔ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅԻՆ ՇԻՆՈՒԱԾՔ ԱՔԵՆԱՑ

Աթէնք , քաղաք պզնծայի ի հնումն և ի  
 նորում , որպէս ասացի , չէ ինչ հեռի ի Պիրէոնէ  
 քան դաանն հազարամէդր՝ ճշգիւ դէպ ի  
 հիւսիսային-արեւելեան կողմնն , սակաւ ինչ բար-  
 ձըր յերեսաց ծովու և գրեթէ հարթ հովտի մի  
 մէջ , զոր յարեւելից , ի հիւսիսոյ և յարեւմտից  
 կը պատեն կոր գծիւ բարձրաբերձ բլուրք , և  
 ի հարաւոյ կը ձգի հովիտն մինչև ի ծովածոցն  
 Աթենայ և ի Պիրէոն : Նորն Աթէնք , որ հնոյն  
 Աթենայ արեւմտեան կողմնն է կառուցեալ ,  
 գրեթէ չորեքանկեան ձևով կ'ընդարձակի իբր  
 քսան քառակուսի հազարամէդր տարածու-  
 թեամբ : Լայն , կանոնաւոր և մաքուր պողո-  
 տայք , որ կը յօրինին երկուստեք ի շքեղագոյն  
 շինուածոց , ուրեք սալարկը սրբատաշ վիմօք և  
 այլուր ուղղընթաց ծառուղիք , ընդարձակ հրա-  
 պարակը աստ և անդ , բարեձև յատակագիծ

փողոցաց ընդ ամենայն կողմանս, մարմարեայ մեծամեծ ապարանից յաճախութիւնն ամենուրեք, պանդոկք Օթէլ Տանկլըթէր, Պրիթանիք և վարչական պաշտօնատունք յարքունական հրապարակի անդ և շուրջ զպալատամբն, հոյակապ շինութիւք Ակադեմիոյ, Համալսարանի, թանգարանաց, Բագմարուեստեան վարժարանի և այլ դպրոցաց, այս ամենայն, հանդերձ այլովք, գեղեցիկ յոյժ և պանծալի կը յարդարեն զԱթէնս և ի յայտ կ'ածեն զբարուք ճաշակ աշխարհաշինութեան Աթենացոց:

**Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ք**

Այլ և քանի փառաւոր են աւերակք հնոյն Աթենայ, այն կիսակործան շինուածք զոր կը տեսանես յարեւելակողմն արդի քաղաքին, ի միջնաբերդին մանաւանդ, զոր Յոյնք Ագրօբօշիս կ'անուանեն. մեծագործութիւնք ամենայնիւ, արժանաւորք արդարեւ դիւցազանց ժամանակի. մեծագործութիւնք՝ որ կարեն մասամբ պատմական արժէք մ'ընծայել Հոմերական վիպաց: Երեսուն և աւելի դարուց ահագին ժամանակամիջոցն անշուշտ պատկառանօք պիտի սահէր առ ստորոտովք այդ պանծալի յիշատակարանաց, եթէ աւերիչ շարաղէտ արկածք

խնայէին ի դոսս: Այդ փառաւոր նշխարք մնացուածոց, որ մարդկային ազգին քաղաքակրթութեան վառարան եղած էին երբեմն, այդ մեծաշուք օթեվանք, ուր դրած էր զիւր գահոյս վեհափառ ոգին աշխատասիրութեան Հելլենաց, արդ ևս կը ծառայէն կարծես զիւրեամբք վեհութիւն և շուք երկնային, լի խրախուսանօք, որ կը վառեն գոգցես զոգին Հելլենաց եռանդագինս մրցել ի գործ յառաջագիմութեան, ի գործ լուսաւորութեան ժողովրդոց, և նկրտել լինել ի համարի քաղաքակիրթ ազգաց Եւրոպիոյ:

Ձանց առնելով սակայն թուել մի առ մի զամենայն նշխարս հնութեանց՝ կը նշանակեմք աստ զգլխաւորսն, որ են՝ Միջնաբերդն և որ ինչ ի նմա, Բաքոսի թատրոնն, Ողիմպական Արամազդայ մեհեանն, Թեսէոսի տաճարն և Սոկրատայ բանտն. յորոց ոմանց շինուածքն անեղծ են գրեթէ ցայսօր:

Միջնաբերդն կառուցեալ կայ ի բարձրաւանդակի ուրեք. զոր կը պատեն կիսաւեր պարիսպք շուրջանակի. տարածութիւն Միջնաբերդի չէ աւելի քան զմի հազարամէրք քառակուսի. քաղաքն համայն, նաև ընդ աղօտ իմն Պիրէոն, տեսանելի են ի Միջնաբերդէն, զորոյ ստորոտովք չպակասին շինուածք հասարակաց, և որ տասն վայրկենի հեռաւորութիւն և եթ ունի

յԱթենայ, ընդ որ կը հայի ի հարիւր յիտուն մէդը բարձրութենէ, իբրեւ հսկայ անարի կամ որպէս պահապան մի վիթխարի, ալեւոր և խորշովեալ ընդ ժամանակօք յռքնաթիւ դարուց: Սեանց և խոյակաց անթիւ բեկորք կան աստ անդ ցիր և ցան. կիսափուլ շինուածոց վերայ ուրեք ուրեք սքանչելի են քանդակք և փորածոյ զարդք, գործք ճարտար մատանց, ընդ որս կը հիանայ ուղեւորն մտախոհ: Այլ քանի խնամով կը պահին այդ ամենայն նշխարք. մի չնչին քարի բեկոր յոյր վերայ թէ նշանախեց մի լինի փորագրեալ՝ անմատչելի է ձեռաց. հակառակ թախանձագին խնդրանացս և խոստմանց, անողոք պահապանն որ կ'ընկերանայ այցելուին՝ չհաճեցաւ թոյլ տալ ինձ հատանել առնուլ մի նշանակիր քարի կոտոր, թէպէտ առանձին էաք բոլորովին: Այս, այսչափի երկիւղածութեամբ կը պահպանեն Աթենացիք զյիշատակարանս իւրեանց հոյակապ նախնեաց:

Ի մէջ այլոց նշանաւոր է ի Միջնաբերդին Աթենասայ տաճարն (Բարթեկնոն), որոյ մեծագործ սիւնքն, թէպէտ մեծաւ մասամբ կիսականգուն, պատկառանս կ'ածեն մարդոյ. քառանկեան ձևով է այս շէնքն՝ շուրջ պատեալ ի քառասուն և ութ մեծաբերձ սեանց, յոյց ոմանց պատուանդանքն եւեթ կը մնան. հարիւր քսան քայլ երկայնութիւն և վաթսուն

քայլ լայնութիւն չափեցի ես անձամբ շրջելով. հարկ է ասել թէ համակ մարմարիոնէ կառուցեալ է շէնքն և սյնալիսի մեծամեծ վիմօք, զորոց իւրաքանչիւրն երկոտասան լուծք եղանց հազիւ ձգել կարեն թերեւս: Հարիւրաւոր անդրիք և կիսարձանք և այլ զարդարուն քանդակք զետեղեալ են Միջնաբերդի յատուկ թանգարանին մէջ, զորմէ պիտի խօսիմք ի կարդին:

Բաց յԱթենասայ տաճարէն, որ մեծագոյն զարդն է Միջնաբերդի, կան նաև մի քանի հոյակապ դրունք և այլ արձանօք զարդարեալ ինչ ինչ շինուածք, ոմանք կիսափուլ եւ այլք բոլորովին կործանեալ:

Մինչդեռ անձանօթ էր շողոյ զօրութիւնն, և կը պակասէին՝ հետեւաբար՝ մեքենայք, որովք յանչափս կը բաղմապատկի մարդկեղէն զօրութիւնն, հիացմամբ կը ըսու մարդ, երբ կը խորհի թէ որպէս հնար եղած էր յայնժամ այնչափ անհնարին ծանրութեամբ քարեր բառնալ հանել ի վեր յամրութիւն և ի զարդ Միջնաբերդին, որոյ քարինքն իսկ կը պատմեն յիւրաւի զմեծութիւն և զփառս հնոյն Աթենայ:

Միջնաբերդի հարաւային ստորոտն է Բարոսի թատրոնն. աւերակք այս շինուածոյն չեն ինչ նշանաւոր զարդիս. պատուական հնութիւնք զոր գտած են անդ, որպէս կը հաւաս-

տեն , փոխադրեալ են այլուր . զի անպատասպար է տեղին՝ դուրով արտաքոյ պարսպաց Միջնաբերդին : Ամիիթատեր ձեռով է այս շէնքն անյարկ ամենեկին . դեռ ևս կը մնան մարմարեայ աղեղնաձև նստարանք , եւ պատուհանաւոր բարձր պարիսպ մի , որ կը թուի լինել ընդարձակ շինուածոյ մի մնացորդն , կը հատանէ ի հարաւոյ կուսէ զբոլորութիւն նստարանացն , որ վերուստ ի վայր կը նեղին աստիճանաբար և կը յանդին ի տափարակ տեղի ուրեք կէս բոլորչի , ուր , որպէս կ'երևի , կռփամարտիկք Յունաց և առիւծամարտիկք կ'երնէին ի հանդէս ուժոյ և քաջարտութեան իւրեանց :

Ի ամանէ սակաւ ինչ հեռի , գէպ ի հիւսիսային-արևելակողմն Միջնաբերդին , ի հարթ վայրի ուրեք , կը բարձրանայ մեհեանն Ողխպական Արամազդայ , կամ մանաւանդ սիւնք ինչ բարձրաբերձք այնր մեհենի որ , եղճիկ , աւերեալ է բոլորովին : Ի մասնէ դատելով զամբողջն՝ կարեմք ասել թէ հնոյն Աթենայ շքեղագոյնն էր այն շինուածն հոյակապ , արժանաւոր վեհ անուան ամպրոպայինն Արամազդայ , զոր , ո՛ր դիտէ , քանի բիւրք բիւրուց մահկանացուայ փառաբանեալ են օրհնութեամբք և երգօք արուեստականաց և ողբեալ զՏիւր և ճենճերօք յոյր ազգերց : Այս աւերածոյն ևս փոխադրեալ են նշխարք ի թանգարանս , և կը

մնան ևեթ մի դուռն քանդակօք զարդարուն և , խուն ինչ ի բացեայ , մի քանի սիւնք իբր քսան մէդր բարձրութեամբ և մի և կէս մէդր տրամագծաւ . թէ և միակտուր չեն սիւնքն , բայց հոյակապութիւն նոցին և գեղեցկագործ քանդակք դեր ի վերոյ են քան զամենայն բեկորս շինուածոց հնոյն Աթենայ :

Յարևմտակողմն Միջնաբերդին , ի տափարակ տեղով ուրեք , կառուցեալ է թեսէոսի տաճարն . շինուածս այս անեղծ է մնացեալ գրեթէ իւր կամարակապ յարկաւն հանդերձ , յոյր վերայ մի փոքր լուսիջոյց ևեթ կայ յարևելեան կուսէ զօրէն ատրուշանի , և սեամբքն որ շուրջ կը պատեն զնա արտաքոյ : Պահապան ոք եմոյժ զիս ի ներքս . պատկառեցայ անդ , երբ տեսի զարձանս Սոկրատայ , Արիստոկղեսի , Դիմասթենեայ և այլոց փիլիսոփայից և հռետորաց , և դից ոմանց , որպէս Զեւսի եւ Հերայի , Ապոլոնի , այլովքն հանդերձ , զորս մի ըստ միովէ կ'անուանէր ինձ ծերունի պահապանն պարծելով իմն ի նախնիս իւր : Կիսոյն անարատ են անդրիք յոտից ցգլուխ , թէպէտ այլոցն եղծեալ ամենեկին . բայց կը պահին նորա , կը պահին ցայսօր այնու հպարտութեամբ , այնու գոռոզութեամբ , որ յատուկ է Յունական ոգւոյն , ի փառս պարծանաց Հելլէն ազին :

Բայց ե՛կ, ընթերցող, եկ ընդ իս Միջնաբերդի հանդիպակաց այդ բլրոյն վերայ, դէպ ի հարաւային-արեւմտեան կողմն . . . կանգ առ աստ պահ մի. այդ նկուղն փորածոյ ի վիմի, զոր կը տեսանես յերիս խորշս բաժանեալ, բանտըն է Սոկրատայ, ճշմարտութեան այն հոյակապ նահատակին, որ էարբ անդ զբաժակ մահու անխռով և հանդարտիկ. մուտ ի ներքս մատչել ի համբոյր այդ սրբական որմնց, ոյց արծաղանդք նուազկոտ իմն կրկնեցին զայն յետին նուազ զմրմունջ անմահ խմաստասիրին՝ թէ «Ճշմարտութիւն՝ Աստուած ինքն է:»

Այլ չպակասին դեռ հետաքրքիր ուղեւորին պատուական մնացորդք հնութեանց աստ եւ անդ, յեկեղեցիս ուրեք և յայլ և այլ տեղիս. որպիսիք են՝ Ստադն, Արիսպագոսն, ճեմարանն, այլովքն հանդերձ, որք բարձրագոյ իմն կ'աղաղակեն՝ թէ արանց մեծաց եւ քաջաց էր այն քաղաք չքնաղ և մեծափառ յաշխարհի:

ՅԱՆԳԱՐԱՆՔ ՇՆՈՒԹԵԱՆՑ

Քաղաքակրթեալ ազինք ևեթ գիտեն պատկառ կալ ազգային հնութեանց. մէն մի նշխար հայրենի մի լուսաւոր էջ կարէ յաւելուլ պատմութեան և կը ինամէ սերտիւ ազնուա-

գոյն ճգտումներ: Յունաստան, դեռ ևս տղայ մանուկ ի քաղաքակրթութեան, կիրթ է արդէն ընծայելոյ արժանաւոր յարգանս իւր պատուական հնութեանց, որ հետզհետէ կուգան ի դուրս աստի անտի: Հինն և նոր հաւասար յարգ ունին յաշս Հելլենաց, մին ի պարծանս և միւսն ի պէտս, և երկոքին իսկ անշուշտ ի շինութիւն հայրենեաց:

Բազմաթիւ և բազմազան են թանգարանք ի Յունաստան, և ճոխագոյնքն Սթէնա: Ազգային հնութիւնք թանկագին հաւաքածոյքն են Հնախօսութեան կենդրոնական թանգարանին, որ հաստատեալ է ի սկզբան թագաւորութեանն Հելլենաց. հոյակապ և գեղեցիկ է այս շէնքն համակ մարմարեայ, յոր իբր երեսուն հազար օսմ. սկւոյ գումար մի ծախք եղած է ի շնորհս ազնիւ առատաձեռնութեան վեհանձն քաղաքացւոյ: Աստ կը բովանդակին արձանք, կիսանդրիք և այլ վիմափոր պատկերք ևեթ գից և դիւցազանց. ամենեքին ատտիկեցի ճարտարաց սքանչելարուեստ կերտուածք, ընդ որս անհնար է ուրեք չզմայլել խորին հիացմամբ. աստուածոյ պատկառելի ակումբ մի կը տեսանես անդ յարձակ սրահի ուրեք, որք կը յօրինեն մի կաճառ երկնային՝ ի մեծամեծաց մինչև ցփոքունս զգծնամիտ գլմօք. մարդկեղէն հանճարոյ մանրածնունդ նրբութիւն մի յինքեանս

կը շողացնեն այդ ճշգրտագործ անդրիք անմահից, անմահք արդարեւ ո՛չ ի խորհուրդս՝ այլ ի կերտուածս գործոց, որ ճարտարախօս լեզուաւ կը պատմեն մարդոյ զփառաց հնոյն Աթենայ: Հնոյն Աթենայ փառացն ի հանդէս անդ ի նմին կանգնած է արձանն Աթենասայ, որ դեռ նոր, — իբր երեք ամիս յառաջ, — ելած է ի դուրս, ի ձեռն գործաւորի ուրուք, ի վարձ անշուշտ աշխարհաշինութեան Աթենացոց. ի Աթիննն. — զի այսպէս կոչեն զնա Յոյնք. — գործ թերեւ Փիդիասայ հրաշակերտ մատանցըն, գեղեցկագոյն և չքնաղ անդրին է յամենայնի որ են յԱթէնս և այլուր և գուցէ ընդ բնաւ աշխարհ, որպէս տեղեակը կը հաւատեն: Ութամեայ մանկան հասակն ունի այդ արձանն. տէգ ի ձեռին և կորդակ ի գլուխ կը կանգնի ուղղորդ մի սրբատաշ փոքրիկ պատուանդանի վերայ. ի ձախմէ կայ ասպար մի բոլորչի մանրագործ քանդակօք զարդարուն, յոյր վերայ կը յենու լուսածղի բազուկն յոյժ բնական վայելչութեամբ. գեղ, շնորհք և փափկութիւն սպիտակափայլ գիւմայն ի հիացումն կը կրթեն զմարդ, որ պահ մի կ'երկբայի թէ արդեօք Աթենաս քա՞ր ծնած էր, թէ մի կոշտ քարի կոտոր Աթենաս էր եղած մարդոյ ուրուք ճարտարութեամբ: Բարեբախտաբար ժամանակն խնայած է դմն առաւել քան

այլոց. յոտից ցղլուխ անեղծ է գրեթէ արձանն, և Խմաստութեան դիցուհին արդեւ ևս խմաստութիւն կը բուրէ գոգցես զիւրեաւ յանկուցիչ շնորհօք:

Բազմաթիւ արուեստաւորք կը յաճախեն յերոպոլիոյ ի տես Աթենասայ արձանին, և ընդ բնաւ կ'ընթանայ համբաւն՝ իբրեւ լրումն մարդկային ճարտարութեան, իբրև գլուխ գործոց գեղեցիկ արուեստին.

«Ո՛ր գեղեցիկ արուեստք,

Ո՛ւր հաճոյ լինել ձեր չեն իրաւունք արդար. . . . :» (\*)

Թանգարանն որ ի Միջնաբերդին՝ յատկացեալ է լոկ այն ամենայն հնութեանց զոր գտած են անդ ի վաղուց հետէ. աստ ևս կը բովանդակին հարիւրաւոր արձանք, քանդակագործ գեղեցիկ խոյակք, անօթք առ տնին եւ այլ բազմապիսի նշխարք հնօրեայք, որ զետեղեալ են անդ ընդ հսկողութեամբ յատուկ պահպանաց, և երիցս յեօթնեկի կը բացուի թանգարանն ի տես հասարակաց, ձրի: Շինուածք թանգարանին չէ ինչ նշանաւոր և գեղեցիկ առ շինուածովք Հնախօսական թանգարանին, զսր նշանակեցի ի վեր անդ. բայց բովանդակու-

(\*) Տըլիւ. Մչակ. Գաղ.—Թարգ. Ա. Գարագաչեանի:

Թիւնն յարդի է յոյժ թէ վասն հնութեանն և թէ վասն գեղեցիկ քանդակագործութեան : Եւրոպացի ձեռագէտք այսր եւս կը յաճախեն հանել լուսանկարաւ զպատկեր արձանաց եւ փորածոյ զարդուց , որպէս տեսի ես երկիցս , և Աթենայ Գերմանական լիկէննի ուսանողք գրչաւ կ'օրինակեն ի վիմի զզարդս խոյակաց ի կրթութիւն և յուսումն արուեստին :

Որպէս յայլ թանգարանս , աստ ևս յատուկ յարդարիչք կան , որոց գործն է բեկեալ անդրեաց կամ անօթոց կազմութիւնն ըստ բուն տիպարի , առանց այլայլելոյ ինչ կամ յաւելլոյ ի կեղծս , որպէս զի իւրաքանչիւր հնութիւն գայ յերևան նաև իւր բնիկ ձևովն և մեծութեամբ :

Չարդիս չիք ոք արուեստաւոր որ կարէ հաւասարել նախնեաց՝ մանաւանդ ի մասին արձանագործութեան . հնարող էին նախնիք , իսկ արդիք նմանող են լոկ : Մինչդեռ կենդանի էր ի միտս նախնի արուեստաւորին խորհուրդ գից և զիւցազանց , վըսեմ՝ երևակայութիւնն թուիչ կուտայր նորա հանճարոյն սլանալ ելանել ի բարձունս , և գրչին՝ ճշգրիտ իմն փորել ի վիմի կամ հարկանել ի գրի որ ինչ երկնել կուտային նմա իւր բոցաթե միտքն և հոգին երկնախոհ . այսպիսեաւ կարեմք մեկնել զհոմերոս և զՓիլիսոս :

Իսկ Մեսենայ և Սպարտայի պատուական հնութիւնք զեռեղեալ են ի հատուածի ուրեք Բազմարուեստեան վարժարանին , թերևս առժամանակեայ : Բազմարուեստեան վարժարանն մին է այն շքեղագոյն շինուածոց , որ զարդ են քաղաքին եւ փառք քաղաքացւոց , եւ որոց նմանն հազուագիւտ է նոյն իսկ յԵւրոպա : Երկու սրահ են յատկացեալ անդ այս թանգարանին , հոյակապ և շքեղ սրահք , յորս չափսանես այլ ինչ բայց եթէ մարմարիոն և կրանիթ . բովանդակ մասունք հնութեանց կը պահին երեսնի չափ գեղեցկագործ գարանաց մէջ , որոց իւրաքանչիւրն անշուշտ կ'արժէ յիսուն ոսկի , մինչև կը շուարի մարդ թէ ընդ ո՞ր արժան է նախ հայել , ընդ գեղեցիկ կերտուածս թանգարանին թէ ընդ մասունս հնութեանցն : Իսկ հնութիւնք թանգարանին , բաց ի մի քանի վիմափոր պատկերաց , կուեայ նկարէն անօթոց և այլ մետաղեայ գործեաց , ընդհանրապէս են զէնք , այսինքն՝ սուր , նիզակ , վաղակաւոր , սակր , այլովքն հանդերձ . զրահք , սաղաւարտք պէս պէս , ոսկեղօժ ճարմանդք եւ այլ բազմապիսի զարդք . ուրեք ուրեք նաև ոսկերոտի , քաջաց թերևս Սպարտացւոց , որ կը պահին անդ խնամով :

Նշանաւոր է դարձեալ Բազմարուեստեան վարժարանի մէջ պատկերաց յատուկ թանգա-

րանն , որ կը բովանդակէ իբր երկու հարիւր  
ընտիր ընտիր նկարներ , յորս չպակասին նաև  
գործք Ռաֆայելի , Միքէլ-Անճէլոյի եւ այլ  
մեծանուն նկարչաց :

Եւ բաց յայսցանէ , ճոխ են նաև Աթենայ  
Հնախօսական Ընկերութեան թանգարանն որ  
ի Վարվաքիոն լիկէոնի , հաւաքածոյք ինչ հնու-  
թեանց ի պաշտօնատան Հասարակաց կրթու-  
թեան , Պիրէոնի թանգարանն անդ ի լիկէոնին ,  
եւ այլ բազմաթիւ թանգարանք ի քաղաքս հե-  
ռաւոր գաւառաց , որպէս ի Թերէ , ի Սպար-  
տա , յՈղիմպոս եւ այլուր :

Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա

Իսպց Աթենայ շինուածոց շքեղագոյնն է  
ստուգիւ Ակադեմիոյ շէնքն , զոր նկարագրելոյ  
համար ըստ արժանւոյն գուցէ բաւական բառք  
պակասին ինձ : Անհնարին զմայլումն կալաւ զիս ,  
երբ գնացի ի տես այդ շքնաղ շինուածոյն ,  
որ , թէպէտ կիսաւարտ , երկնագոգեցիկ իմն  
հիացմամբ կը մտէ գուշ եւ զուրուշ դիտողին :  
Չէ ինչ ընդարձակ շէնքն եւ ոչ իսկ բարձրա-  
բերձ . չիք ի նմա եւ ոչ մի զարդ նորանշան .  
ամենայն ինչ պարզ է անդ , ամենայն ինչ վսեմ  
ի պարզութեան անդ , մինչ զի

Եւ թերեւս ինքն Աթենաս նախանձարեկ  
լեալ ընդ այն՝  
Խնդրէր ի նմա բընակել , եւ ի նըմին դընել  
խորհէր

Չաստուածախումբ դիցըն կաճառ ողիմպա-  
բնակ հայրն Արամաղդ :

Եւ խորհրդով անշուշտ , եւ ոչ դիպուածով ,  
ձեւ եւ յօրինուած այդ շինուածոյն նման են  
ամենայնիւ Աթենասայ տաճարին զոր տեսաք ի  
Միջնաբերդի անդ :

Աննախանձ , — եւ գուցէ մեզ անհաւատա-  
լի , — սուստաձեւնութիւն Հելլենաց հինգ  
միլիոն ֆրանք ծախսած է ի դա ի քսան եւ վեց  
ամաց հետէ , եւ տակաւին երկու միլիոն պիտի  
ծախսէ ցլրումն շինութեանն ի միջոցի երկց ամաց :

Աւագ դահլիճն , յորում պիտի խմբի ակա-  
դեմական կաճառն , մարմարեայ է համակ սրբա-  
տաշ վիմօք . նաև բաթրոնք , յորս պիտի հան-  
դերձին բազմոցք ժողովականաց , մարմարեայ  
ողորկ տախտակօք յօրինեալ են երկուստեք եւ  
կրկին կարգաւ , յորոց մին բարձր է քան զմիւսն  
իբր կէս մէդր . Սոյն դահլիճի դրան վերայ նկար-  
եալ է դիւցական առասպելն Պրոմէթեոսի , զոր  
հանդիսապէս կը տօնէին Աթենացիք ի հին  
ժամանակս . գործ արդարեւ հիանալի , զոր  
գերմանացի ոք ճարտար նկարած է կենդանի  
երանգօք , բաւական ընդարձակ դրիւք :

Երկու արձակ սրահք եւս կան յերկուս կողմանս աւաղ դահլճին, յորոց մին մատենադարան պիտի լինի ակադեմիկեանց յատուկ, եւ միւսն հանդիսասրահ տօնից:

Խոյակք սեանց որ կը պատեն զշինուածն արտաքոյ շուրջանակի՝ ոսկեզօծեալ են համակ, եւ այլ երկու կճեայ մեծաբերձ սիւնք կը կանգնին առաջի աւաղ դրանն աստի եւ անտի, յորոց վերայ պիտի զետեղին Աթենասայ եւ Ապոլոնի հսկայ արձանքն, յորս կ'աշխատին իտալացի ոք արձանագործ եւ երկու յոյն սատարք յերկից ամաց հետէ. այդ կրկին արձանաց շինութեան համար, որոց բարձրութիւնն չէ նուազ քան զերիս մէդր, հարիւր քսան հազար Փրանք ծախք սահմանեալ է ցամբոկ գործոյն:

Պ. Տէֆնէր Գերմանացի ուսումնականն, փոխտնօրէն Ազգային մատենադարանի եւ դասատու լեզուաբանութեան ի Համալսարանին Աթենայ, որ ազնիւ հիւրընկալութեամբ կը պատուէր զիս և կ'առաջնորդէր յայլ և այլ տեղիս, կը հաւաստէր ինձ թէ յանուն ակադեմիոյ այսպիսի շինուած մի չկայ կառուցեալ ընդ ամենայն Եւրոպա, և կը յարէր. Մեծատունք Յունաց, նաև քաղաքացին ըստ իւրում չափու, ի սկզբանէ անտի նախանձընդդէմ միմեանց կը նպաստէին լիաբուռն նուիրատուութեամբ այս գեղեցիկ շինուածոյն կառուցման. նովին ե-

ւանդեամբ կը յաճախեն նպաստել և ցայսօր: Եւ ահա, չլարանեցաւ յաւելուլ, շինութիւնն մերձ է ի լրանալ. ահա Ակադեմիայն Յունաց բայց ակադեմիկեանք չեն ծնած տակաւին առ Յոյնս: — Իսկ առ մե՞զ...:



Հ Ա Ս Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Ոչինչ նուազ շքեղ է նաև Համալսարանն Աթենայ, որ մերձ է անդ: Այս շէնքն ևս, իբրև համալսարան, ամենայնիւ արժանաւոր է իւր անուան: Ի սկզբան անդ, յամին 1837, հաստատեալ է Համալսարանն, անդ ի ստորոտս Միջնաբերդին, մի փոքրիկ տան մէջ, եւ յետոյ ուրեմն փոխադրեալ ի նորակառոյց շինուածն որ է յԵւոզեան փողոցի անդ, ի հիւսիսային կողմն քաղաքին: «Բոլոր Հելլենացի մեծատունք, որպէս կը գրէ Պ. Ա. Մանսօլա (\*), Տնօրէն Վիճակագրութեան սենեկին Աթենայ, ի չորից ծագաց երկրի բերած են զիւրեանց քարն ի շինութիւն Հելլենականութեան այս մտաւոր վառարանին: Յայսմ կենդրոնէ, կը յաւելու նա, ճառագայթելով կը սփռի լոյս յառաջադիմութեան և քաղաքակրթութեան՝ ոչ միայն նոցա վերայ որ կը բնակին այս փոքրիկ պետութեան

(\*) Իւր «Յունաստան» անուն գրքուկին մէջ:

մէջ, այլ և բովանդակ Հելլենական ցեղին վերայ, որոյ մատաղ սերունդք ամ ըստ ամէ կ'ողջագուրեն զմիմեանս ընդ կամարօք այս մուսայից տաճարին և ընդ պայծառ երկնաւ հայրենական ամանց:»

Բնագիտական, բնալուծական և կենդանաբանական թանգարանք որ ի նմա՝ ճոխ են յոյժ, մանաւանդ կենդանաբանութեան թանգարանն, յորում չպակասին ամենազգի կենդանիք, չորքոտանի, սողուն, թռչուն և ջրական. ի մէջ այլոց կան մինչև իսկ առիւծ, վագր, ընձուղտ, ռնգեղջիւր, վիղ, օձ, վիշապ, և կէտ, շանաձուկն և այլ բազմապիսիք, ամենեքին զմուսեալ վայելչապէս. նաև ընդարձակ դարան մի կը ընուն գեղեցիկ թռչունք Հնդկաց՝ նոյնպէս զմուսեալ և յարդարից: Իսկ զմատենագարանէն որ ի նմա՝ պիտի խօսիմք ի կարգին:

Գեղեցիկ եւ շքեղ է յոյժ հանդիսասրահն զոր Ոթոն Ա. իւր ծախիւք տուած է յարդարել անդ Համալսարանին տօնից յատուկ. սրահն յօրինեալ է համակ մարմարեայ վիմօք և կրանիթեայ սեամբք զարդարեալ. միայն երկու հազար թիկնաթուք կան աւազորերոյ համար, ի բաց առեալ այն արձակալայրն որ ժողովրդեան է յատուկ. այնչափ ընդարձակ է սրահն:

Այսօր հազար եօթն հարիւր երիասարդք,

18-25 տարեկան, կը յաճախեն ի Համալսարանն Աթենայ, յորում կ'աւանդին Աստուածաբանութիւն, Փիլիսոփայութիւն, Իրաւագիտութիւն և Բժշկութիւն: Եօթանասուն և չորս բարձրագոյն ուսուցիչք, հանդերձ քսան և մի երկրորդականօք, կը դասախօսեն անդ հետեւեալ կարգաւ.

5 Ուսուցիչք կը դասախօսեն զԱստուածաբանութիւն.

15 Ուսուցիչք և 8 երկրորդականք կը դասախօսեն զՓիլիսոփայութիւն.

25 Ուսուցիչք և 8 երկրորդականք կը դասախօսեն զԻրաւագիտութիւն.

29 Ուսուցիչք և 5 երկրորդականք կը դասախօսեն զԲժշկութիւն:

Գրականութեան, Բնալուծութեան և Գեղագործութեան ուսմանց յատուկ երեքկիւն բանախօսական կաճառք ևս սահմանեալ են անդ ի գործնական կիրառութիւն տեսականին:

Բաց յայսցանէ, Համալսարանի ուսմանց կը պատկանին նաև Դիտարանն, որ հաստատեալ է յամին 1840 և է այժմ ընդ անօրինութեամբ Պ. Յուլիոս Սմիթի, գերմանացի աստղաբաշխին. Բուսաբանական պարտէզն, Մանկաբարձական հիւանդանոցն, Քաղաքային հիւանդանոցն, նոյնպէս Աչացաւի և Գաղիական ախտի հիւանդանոցն:

Յվերջ դպրոցական տարւոյ 1880 ամին, 9362 ուսանողք հետեւած են Համալսարանի ուսմանց, յորոյ 2911 ուսանողք վկայական ստացած են ի հետագայ ուսմանս.

26 Ուսանողք յԱստուածաբանութեան.

1292 Ուսանողք յԻրաւագիտութեան.

1145 Ուսանողք ի Բժշկութեան.

158 Ուսանողք ի Փիլիսոփայութեան.

290 Ուսանողք ի Դեղագործութեան. յորոյ գրեթէ 2500ն բուն Յունաստանի կը վերաբերին, և մնացեալք օտար տէրութեանց, գլխաւորաբար Օսմ. կայսրութեան, հպատակ յունաց:

Համալսարանական կրթութիւնն, որպէս ամենուրեք, ձրի է և առ Յոյնս: Պետական գանձն իբր 400,000 Փր. կը ծախսէ ի տարւոյ, եւ 150,000 Փր. ի գումար մի եւս կը հայթայթի յեկամոյց Համալսարանին, որոյ ստացուածքն կը հաշուին գրեթէ 3,500,000 Փրանք:

Ահա այն ահագին հաստատութիւնն որ կը մատակարարէ զբարձրագոյն կրթութիւն երիտասարդ սերնդեան Հելլէն ազգին:

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԵՒ ՆԱԽՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՔ

Երկրորդական կրթութիւնն ի Յունաստան

կ'աւանդի երկու կարգ դպրոցաց մէջ, որք են՝ Հելլենական դպրոցք և Լիկէոնք:

Հելլենական դպրոցք, թէպէտ ստորին քան զլիկէոնս, բաւական ընդարձակ կրթութիւն մի կուտան այն աշակերտաց որ տարրական կըրթութիւն ստացած են ի նախնական դպրոցի, և, յընթացս երկից ամաց, կը պատրաստեն զնոսա լիկէոնի կրթութեան:

Այս կարգի դպրոցաց մէջ ուսանելի առարկայք են՝

Կրօնագիտութիւն,	երկից կարգաց մէջ	ևս
Նոր Յունարէն,	»	»
Աշխարհագրութիւն,	»	»
Համարողութիւն,	»	»
Երկրաչափութիւն,	»	»
Փրանսերէն,	»	»
Պատմութիւն,	»	»
Գեղագրութիւն,	»	»
Լատիներէն, միայն Բ. և Գ. կարգաց մէջ,	բայց ոչ պարտաւորիչ:	

Իսկ լիկէոնք առաւել բարձր կրթութիւն մի կուտան այն աշակերտաց որ հելլենական դըպրոցի ուսմանց հետեւած են անթերի. ուսանողք լիկէոնի, յընթացս երկից շրջանաց, կը պատրաստին համալսարանական կրթութեան որ լիկէոնի ուսումնաւարտ աշակերտաց է յատուկ. կամ, ի նոյնչափ ժամանակի, կը պատ-

բաստին ըստ պիտոյից տալ զինքեանս ազատ արուեստի մի՛ զորն և ընտրէ իւրաքանչիւր ըստ կամաց :

Լիկէննաց մէջ կ'աւանդին հետագայ ուսմունք .

Կրօնագիտութիւն ,	չորից	կարգաց	մէջ	ևս
Հին Յունարէն ,	»	»	»	
Լատիներէն ,	»	»	»	
Փրանսերէն ,	»	»	»	
Ուսողութիւն ,	»	»	»	
Բնական գիտութիւնք ,	»	»	»	
Պատմութիւն ,	»	»	»	
Աշխարհագրութիւն ,	»	»	»	

Տարերք Փիլիսոփայութեան, միայն երկու բարձրագոյն (Գ. և Գ.) կարգաց մէջ .

Գեղագրութիւն, միայն երկու ստորին կարգաց մէջ . նաև

Անգղիերէն ,  
Գերմաներէն և

Իտալերէն . բայց այս երեքին լեզուք չեն պարտաւորիչ ի լիկէննս առ հասարակ :

Հելլենական դպրոցաց և լիկէննաց կրթութիւնք ձրի չեն ի Յունաստան : Թէպէտ պետութեան գանձն , յանուն Երկրորդական կրթութութեան , 1,050,000 ֆր . կը ծախսէ ի տարւոյ՝ իբր 600,000 ֆր . հելլենական դպրոցաց համար . — զի սորա գրեթէ ութպատիկ բազ-

մաթիւ են քան զլիկէննս . — և գող 450,000 ֆր . լիկէննաց . բայց ծախուց մեծագոյն մասնն կը հայթայթի աշակերտաց թոշակօք , որ ցերեկէից համար ամսական 20 ֆր . և գիշերօթկաց համար տարեկան 1,200 ֆր . են ընդհանրապէս :

Բաց ի հասարակային դպրոցաց , կան նաև մասնաւորաց վարժարանք՝ հելլենական դպրոցի կամ լիկէննի աստիճանաւ , որք գիշերօթիկ են մեծ մասամբ , և յորս նախնական և երկրորդական կրթութիւնք միանգամայն կ'աւանդին : Ի մէջ այլոց , գնացի ես յայցելութիւն երկու մասնաւոր դպրոցաց յԱթէնս . միոյն հիմնադիր-անօրէնն , Պ . Ի . Սիմօբուլոս , հանդերձ իւր ազնիւ տիկնաւն որ խնամատարն է վարժարանին , պատուով ընկալան զիս , իբրև հայ դպրոցի մի անօրէն , որ , թէև ոչ բախտակից , գոնէ պաշտօնակից էի նոցա : Կը ջանայի զերկուսին միանգամայն ցուցանել յիս , զպաշտօնակցութիւն հանդերձ բախտակցութեամբ . բայց մերթ , ի կարգս խօսից , հարցափորձք անօրինին կը տագնապէին զիս , և յաճախ կը նկրտէի , թէև յանպատշաճս , մեղմով շրջել զխօսակցութիւն մեր , և կ'ասէի . . . ճոխ մատենադարան մ' և առաւել ճոխ թանգարան մ' ունիք բնական գիտութեանց . . . Ի՞նչ գեղեցիկ տեսարան ունի ձեր այս շէնքն . քանի՞ ֆր . վարձ

կ'առնուն ի ձէնջ. — Մերն է այս շէնքն, ասաց  
յանկարծ Տ. Սիմօնուլոս, զոր դեռ նոր գնեւոյ  
արժանացաք. — Քանի՞ ֆրանքի. — Յիսուն  
հազար տրախմի. — Քանի՞ աշակերտ ունիք.  
— Եօթանասուն գիշերօթիկ, քսաներեք կէս-  
գիշերօթիկ և հարիւր երեսուն ցերեկեայ. —  
Խիստ լաւ, աիկին. ո՞րչափ է ձեր աշակերտաց  
թոշակն. — Գիշերօթիկաց թոշակն է տարեկան  
հազար երկու հարիւր տրախմի, ի բաց առեալ  
օտար լեզուաց (Անգ. Գեր. և Իտալ.) և Չայնա-  
կան երաժշտութեան և այլ ուսմանց համար  
սահմանեալ յատուկ ծախքն. կէս գիշերօթիկաց  
ամսականն է քառասուն, և ցերեկէիցն քսան  
ֆրանք. — Կարողութիւն կը մաղթեմ ձեզ, ա-  
սացի, և մեկնեցայ անտի: Ստացայ վարժարանի  
կանոնագիրն, որ կը բովանդակէ մի և նոյն  
պայմաններն հանդերձ ծրագրաւ ուսմանց (\*):

(\*) Կը լսեն արդեօք մեր հայ ծնողք: — Չոր ազ-  
գասիրութիւն և և ուսումնասիրութիւն ոչինչ կ'ար-  
ժեն. բաւական չէ զգալ թէ դաստիարակութեան  
կարօտ է մեր ժողովուրդն, թէ ազգին միակ և և  
միակ պէտքն է զարդիս նոր սերնդեան կրթու-  
թիւնն. այս և այսպիսի հանապազօրեաց զրոյցք  
դանկի միոջ չվաճառին, եթէ չգիտեն, որպէս է  
խակ, հարք և և ազգայինք առ մեզ զեղանակ դաս-  
տիարակութեան, որոյ սկիզբն և և կատարած կը  
հային լոկ ի գումարս արծաթոյ:

Եւ այն բարեբաստիկ մեծատունք, որ իւրեանց

Երկրորդ դպրոցի հիմնադիր-անօրէնն, Պ. Բ.  
Անտօնիանտիս, հիւանդ գորով յանկողնի՝ չկա-  
րաց զիս անձամբ ընդունել. բայց առժամայն  
հրահանգ ետ իւր փոխանորդին, Պ. Լ. Իօա-  
նի տէսի, որ ամենուրեք առաջնորդէ ինձ և  
տայ որ և է տեղեկութիւն զոր խնդրեմ. այս-  
պէս կը դրէր այն քարախիսն վերայ զոր ինձ  
յղեյ՝ ցաւ յայտնելոյ համար քաղաքավարաբար  
զի նոյն օր չկարէր այցելութիւն ընդունել առ  
իւր:

Այս մասնաւոր դպրոցին մէջ կ'ուսանին գրե-  
թէ երկու հարիւր պատանիք, մասամբ գաւա-  
ռացիք որ գիշերօթիկ են բնականաբար. դպրո-  
ցական թոշակն նոյն է համարեա թէ և յայսմ  
վարժարանի, որ նախնական միանգամայն եւ

---

սեղանոյ փշրանաց իսկ արժանի չհամարին զազգա-  
յին դաստիարակութիւն, որ կը զլանան ոչ միայն  
զչափաւորն այլ և և զանբաւականն, թող քաջ խե-  
լամուտ լինին թէ, եթէ այսօր պարծանաց մի ան-  
նշան յառաջադիմութիւն ունի Հայ ազգն, ժողո-  
վըրդեան ազքատ զաւակաց գործն է այն. նո՞քօք  
կը բաբախէ ազգային յառաջադիմութեան զարկն.  
Իւրեամբք ո՞չինչ կը լինի:

Բայց դեռ միամիտ ժողովուրդն կը յաճախէ յղել  
յերեսփոխանական ժողով մեր այնպիսի երեսփո-  
խաններ՝ որ կը փայլին անդ լոկ ժամացուցի ոսկե-  
ղէն շղթայիւ և և բացարձակ տգիտութեամբ: Եւ  
յոյսպիտեաց սպասել գործ յառաջդիմական . . . :

երկրորդական կրթութիւն կուտայ յոյն և մի փոքր թուով օտարազգի ուսանողաց: Համարձակեցայ մեղմով հարցանել փոխանորդին՝ թէ արդեօք ի՞նչ կը շահի դպրոցի անօրէնն ի տարւոյ. — Թերեւս ասաց, տարեկան հինգ հարիւր ոսկի շահ մի թողու այժմ վարժարանն. զի անձուկ է ժամանակս: Մի դումար՝ զոր, եթէ չսխալիմ, հայ դաստիարակ մ'իւր բովանդակ կենաց մէջ չկարէ շահել... դու յաւե՛լ նաեւ մի հայ խմբագիր կամ մատենագիր առ մեզ:

Երկրորդական կրթութեան յատկացեալ հասարակային լիկէնք եւ հելլենական դպրոցք բազմութիւ են յԱթէնս, յորոց մի քանին նշանաւոր են յոյժ: Չունելով երկար ժամանակ՝ գնացի միայն յայց այն կրթական հաստատութեանց զորոց գովեստիւք կը խօսէր ինձ Պ. Ա. Քօրտէ՛լա, Տեսուչ Հանքաց յԱթէնս, ընդ որում տեսակցելոյ պատիւն ունէի, ցորչափ և կացի անդ ի մայրաքաղաքին: Այս աղնիւ եւ ուսումնական անձնն ամբաւ երախտագիտութեամբ յոյց զիս՝ տալով ինձ այնպիսի տեղեկութիւններ զոր գրեթէ չկարէի քաղել յայլոց, և առաջնորդելով ինձ յայնպիսի տեղիս յոր անհրաման չկարէ ոք երթալ յայց: Յայտպիւեաց է Արսա՛քիօն անուն հելլենական դպրոցն աղջկանց յատուկ, յորում կան նաև նախնական դպրոցի դասարանք. պանծալի՛ հաստա-

տութիւն, ուր 1,200 ցերեկեայ, 100 գիշերօթիկ և 100 կէս-գիշերօթիկ աշակերտուհիք կը հետեին նախնական և երկրորդական աստիճանի ուսմանց, զոր կ'աւանդեն երեսուն և հինգ ուսուցիչք և ուսուցչուհիք, առաջինք փոքր թուով: Չեռագործաց և Չայնական երաժըտութեան կրթութիւնք պարտաւորիչ են բոլոր կարգաց համար. պարտաւորիչ է նաև Տեսուսագիտութիւնն ըստ առտնին պիտոյից (\*): Չայնական երաժշտութիւնն սքանչելի օրինակաւ

(\*) Ո՞ր այն հոգաբարձութիւն աղջկանց վարժարանի ուշադիր կը լինի առ մեզ այս կարեւորագոյն ուսման զարգացմանն յազգային վարժարանս: Տընաւեր զարդասիրութիւնք անբաւ չարեաց պատճառք կը լինին, եւ ոչ ոք է որ դարձնէ զուշ իւր յայն աղետալի թերին: Պարզասէր Հայուհեաց ընկերութիւնն առաւել արդիւնաւոր կերպիւ ծառայած կը լինի իւր օգտակէտ նպատակին, եթէ, ըստ իս, իգական նոր սերնդեան ի տղայ տիոց ուսուցանէ զարգասիրութիւն՝ իւր ծախիւք անտեսագիտական ուսումներ աւանդելով այն վարժարանաց մէջ զորս յարմար կը դատէ առ այժմ: Մեք, մեր աղջկանց կրթութեան յատկացեալ վարժարանաց մէջ, խլուրդներ կը սնուցանեմք, եւ կը սպասեմք զի քանարիկս ծնանին մեզ նոքա, եւ կը յուսամք զի արծուիս սնուցանեն ջղջիկանք որ ի խաւարի են եւ ընդ խաւար կը գնան. սպասել եւ յուսալ անխորհուրդ եւ առանց ջանից... ի վէպս, ի վէպս արդարանայ այդ թերեւս:

զարգացեալ է անդ . այն օր , յորում առան-  
ձինն յայց էի ելած , ես անձամբ ունկնդիր ե-  
ղէ չորս հարիւր աշակերտուհեաց միաձայն եր-  
գոցն , զոր կը գեղգեղէին զմայելի եղանակաւ  
ի ձայնակցութիւն կրկին երգեհոնաց . հրեշտա-  
կային նուագաց կը կարծէի ունկնդիր լինել (\*):

Երկրորդական կրթութեան յատուկ 150  
հեղինական դպրոցք և 21 լիկէոնք կան ընդ  
ամենայն Յունաստան , յորս կ'ուսանին իբր 13 ,  
000 աշակերտք եւ աշակերտուհիք , ի ձեռն  
500 է աւելի ուսուցչաց և ուսուցչուհեաց :

Նախակրթութիւնն պարտաւորիչ սկզբան  
վերայ հիմնեալ էր 1834 ի պետական օրինօք :  
Ըստ այսմ օրինաց՝ իւրաքանչիւր աւանի հա-  
սարակութիւն (commune) պարտէր ունել մի  
նախնական դպրոց , յոր պարտէին յաճախել  
5-12 տարեկան տղայք , մինչև իսկ օրական 10  
շերժա (իբր 8 փարա) տուգանք սահմանեալ  
էր այն ծնողաց որ զանց առնէին զայդու օրի-  
նօք : Բայց այս օրէնքն անգործադրելի մնաց :


(\*) Իսկ Չայնական երաժշտութիւնն . . . — է՛հ ,  
մեք գործ չունիմք գեղեցիկին հետ , մեք գործ  
չունիմք բարւոյն եւ ճշմարտին հետ . մեզ համար  
պաշտելի չէ այդ երրորդութիւնն . օ՛ն անդր ի բաց ,  
ի բաց ի մէնջ ամենայն յառաջադիմութիւն :

Ապա յետոյ , յամին 1878 , նորոգ հրատարակ-  
եալ օրինաց զօրութեամբ մեծապէս բարւոքե-  
ցաւ նախակրթութիւնն , և ուսանելի առար-  
կայք նոր ուղղութիւն եւ ընդարձակութիւն  
ստացան : Ըստ այս վերջին օրինաց ևս՝ նախա-  
կրթութիւնն պարտաւորիչ է այսօր , սկզբամբ .  
զի , որպէս տեղեակք ասացին ինձ , նախակրթ-  
ութեան պարտաւորիչ օրէնքն չզօրէ ամենու-  
րեք , այսինքն՝ այդ օրինաց բոլոր տրամա-  
դրութիւնք չգործադրին անթերի ընդ ամենայն  
կողմանս երկրին : Այսու հանդերձ մեծապէս  
բարւոքեալ է նախակրթութիւնն զարդիս , եւ  
պետութեան բոլոր գաւառաց մէջ նախնական  
դպրոցաց յաճախութեամբն , եթէ այժմ ոչ օ-  
րինօք , գէթ արդեամբք պարտաւորիչ դառնա-  
լոյ երեւոյթն ստացած է յերկի ամաց հետէ .  
վաթսուն և աւելի նախնական դպրոցք կան  
երկու սեռի , հանրական և մասնաւոր , միայն  
յԱթէնս :

Ուսանելի առարկայք ի նախնական դպրոցի  
են հետագայք .

Պատմ . Ս . Գրոց (\*) եւ Քրիստ . վարդապե-  
տութիւն .

(\*) Ես անձամբ ունկնդիր եղէ Ս . Գրոց դասա-  
խօսութեան ի նախնական դպրոցի ուրեք . դասա-  
գիրք բնաւ չկային ի ձեռս տղայոց , այլ լիկ գունա-  
ւոր պատկերք Ս . Գրոց պատմութեան նշանաւոր



Նոր Յունարէն (ընթերցումն և գիր.)

Համարողութիւն, հանդերձ կարևոր ծանօթութեամբք կշուոյ, չափուց և կիրառութեան դրանոց .

Ծանօթութիւնք երկրաչափական ձևոց .

Աշխարհագրութիւն համառօտ, մասնաւորապէս՝ աշխարհագրութիւն Յունաստանի և Հելլենական գաւառաց .

Պատմ. ազգաց համառօտ, ի մասնաւորի՝ պատմութիւն Յունաց .

Սկզբունք երկրաբանութեան, հանրաբանութեան և Բուսաբանութեան .

Գիտութիւն մարդկային ցեղից .

Սկզբունք Բնագիտութեան .

Կարևոր գիտելիք երկրագործութեան .

Գծագրութիւն .

Ձայնական երաժշտութիւն, և

Մարմնամարզք :

Ղիպաց . ի նոսա կը պատմէր դասատունն հանդերձ բարոյական խրատութեամբ, եւ ի նոսա պատասխանի կուտային աշակերտք յաջողութեամբ . այս եղանակաւ կը դասախօսեն ստորին երկից կարգաց : Ընդհանրապէս խօսելով՝ բոլոր դասախօսութեանց եղանակք, թէ ի նախնական եւ թէ յերկրորդական դպրոցս, ղիւրուսոյց են կարի . բայց ոչ տեղիս եւ ոչ առօրեայ դրազմունք կը ներեն ինձ զայդմանէ եւս խօսել երկարօրէն, որ ինչ թերեւս կարէր օգտակար լինել բազմաց :

Նախնական կրթութեան ուսուցիչ պատրաստելոյ յատուկ վարժապետանոց մի կայ յԱթէնս . անդ, յընթացս երկից շրջանաց, վարժապետացուք պարտին ուսանել զհետագայս .

Կրօնագիտութիւն .

Մանկավարժութիւն .

Յունարէն (հին և նոր) .

Պատմութիւն .

Համարողութիւն և երկրաչափութիւն .

Բնական գիտութիւնք .

Գործնական ծանօթութիւնք Հողագործութեան և մշակութեան ծառոց .

Գծագրութիւն .

Գեղեցկագրութիւն .

Ձայնական և գործիական երաժշտութիւն, և

Առողջաբանութիւն :

Ըստ ներերկոյ ժամանակիս՝ գնացի միայն յայց չորս նախնական դպրոցաց յԱթէնս, յորոց մին մասնաւորի կը վերաբերէր : Գաստիարակի աչօք գիտելով՝ ըստ ամենայնի համաձայն գտի զայնս տղայ մանկանց բարոյական, առողջական եւ մտաւորական զարգացմանց . հարիւրաւոր տղայք կը նստէին ի դասարանս, ամենեքին կարմրայտ և զուարթ երես, կայտառ և համարձակախօս . մաքրութիւն՝ վերջինն աստիճան, գարչահոտութիւն՝ երբեք (\*) : Այն չորս նախակրթարանաց,

(\*) Իսկ մեր թագային վարժարանք . . . . թող գաս

յորս կան նաև ընտելարանի մանրիկ մանկուհիք, աշակերտաց թիւն առաւել էր քան զհազար երեք հարիւր. նոր սերունդն էր այն զոր կը պատրաստեն ըստ հանդամանաց ժամանակիս: — Իսկ առ մե՞զ.....:

Նախակրթութեան համար, ընդ ամենայն Յունաստան, իբր 1,700,000 ֆրանք ծախք կը լինի ի տարւոյ. պետութեան գանձն 200,000 ֆրանքի գումարաւ եւթ կը մասնակցի այդ ծախուց, և մնացորդն հասարակաց կը պատկանի. և զի գաւառական հասութից գումարն ինն միլիոն կը հաշուեն, կը հետեւի ուրեմն թէ նախնական կրթութեան ծախուց գումարն ի Յունաստան՝ հաւասար է նոյն հասոյթից  $\frac{1}{6}$  ի գումարին:

Ըստ ճշգրիտ տեղեկութեանց՝ 1284 նախնական գալրոցք կան ի Յունաստան, յորոց 1126ն արու մանկանց են յատուկ, և 158ն աղջկանց. 1260 ուսուցիչք և 275 ուսուցչուհիք կան ի նոսա, և աշակերտաց թիւն է՝ արու մանկանց իբր 75,000 և աղջիկ աղայոց՝ 16,000: Այդ

մենայն, բաւ է միայն գարչահոտութիւնն, բաւական է միայն աղտեղութիւնն որ ի նոսա՝ անբաժանելիք: Թէ մի աննշան թիւ ի բաց առնուս, յիրաւի սպանդարան են մեր թաղային գալրոցք, եւ ոչ վարժարան:

վիճակագրութեան մէջ է նախնական մասնաւոր գալրոցաց թիւն, որ չէ առաւել քան զութսուն, երկու սեռի միանգամայն:

Ահա և նախակրթութիւնն ի Յունաստան:

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԵՆԱԳԱՐԱՆ

Այլ Ազգային Մատենադարանն, որ ի Համալսարանին Աթենայ, մին է այն պանծալի հաստատութեանց որ փառաւոր գրաւական են Հելլէն զարմին քաղաքակրթական խորագոյն ձգտմանց:

Կարի ընդարձակ սրահ մի յատկացեալ է անդ Մատենադարանին, յորում կը բովանդակին ոչ նուազ քան զ140,000՝ հատոր գրեան: Ի սկզբան անդ, յառաջնում ամի թագաւորութեանն, հաստատեալ է Մատենադարանն երեք հազար հատոր գրեանով, զոր ի նուէր են տուած Զօսիմա անուն եղբարք. յետոյ գամ՝ քան զգամ ճոխացեալ է Մատենադարանն՝ ըստ մեծի մասին առատ նուիրօք գրականութեան բարեկամաց, և մասամբ գնոց գնեալ մատենիւք: Զպակասին անդ անյազ գրասիրին ամենազգի գրեան, գիտական կամ փիլիսոփայական, բանասիրական կամ լեզուարանական, պատմական աշխարհագրական, մանկավարժական, տնտե-

սական, արուեստական, այլովքն հանդերձ, որք զբեռեղեալ են յերեսուն և մի հատուածս յոյժ կանոնաւորութեամբ: Ի միջի գլխաւոր երկուց բաժանմանց մի սրահ կայ ընդարձակ, ուր սեղան մի դրուած է երկայնաձիգ, և երեսնի չափ ընթերցասէրք, որպէս տեսի, գըլխաբաց կը պարապէին անդ յընթերցմունս: Աւելորդ կը լինի կարծեմ ասել թէ Մատենադարանի մուտքն ձրի է հասարակաց ի սահմանեալ ժամս: Պ. Տէֆնէր, որ աստ ևս կ'ընկերանայր ինձ, ահագին մեծութեամբ արկեղ մի մօտն տանելով զիս՝ կ'ասէր. Ահա նորոգ նուիրատուութիւն, զոր երէկ յղած է այսր ընթերցասիրական նորակազմ՝ ընկերութիւն մի, որ զնախախայրիս իւր, 500 հատոր գրեան, կը նուիրէ Ազգային Մատենադարանիս: — Դեռ ևս փակեալ էր արկղն եւ ընկերութեան կնքովն կնքեալ (\*):

Մատենադարանի յանձանձանայ համար

(\*) Ես այլ կը ջանայի վարդազոյն նկարագրել մեր ընթերցասիրական վիճակն. մեք եւս ունիմք, կ'ասէի նմա, բազմաթիւ ընթերցարաններ, թէ ի Կ. Պոլիս եւ թէ այլուր, լի գրեհով...: Բայց որքան թուով գրեան, թէ հարցանէր ինձ յանկարծ, զինչ կարէի ասել նմա...: — Կը նախանձին արդեօք մեր դժբախտ գրագէտք. կը լսեն արդեօք մեր մեծատունք...:

կարգեալ է մի ընդհանուր տեսուչ, որ ունի ընդիւրեւ մի փոխանորդ, երկու օգնիչ և մի քանի պահապան. իսկ բարձրագոյն հսկողութիւնն կը պատկանի պաշտօնէութեան հասարակաց կըրթութեան: Պեսութիւնն իբր 30,000 ֆր. սահմանած է ի պէտս Մատենադարանին ի տարւոյ: Բայց յԱզգային Մատենադարանէն, կան նաև բազմաթիւ մատենադարանք թէ ի մայրաքաղաքին և թէ ի գաւառս: յորոց գլխաւորքն են՝ Խորհրդարանի մատենադարանն, որ կը բովանդակէ 23-24,000 հատոր. Ռիզարիօն անուն կղերական դպրոցի մատենադարանն (յԱթէնս,) որ ունի 4,000 հատոր՝ նոյն վարժարանի ուսուցչաց եւ աշակերտաց յատկացեալ. Քօրֆուի մատենադարանն, որ ճոխ է 35,000 հատոր գրեհով. մատենադարանք որ ի Պեղոպոնէս և այլուր՝ լի են հազարաւոր հատորովք, և այլ մեծ և փոքր մատենադարանք ի տեղիս տեղիս և ի լիկէոնս ուրեք:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Եւ դեռ կան յԱթէնս շինուածք ինչ նշանաւոր, առ որովք չկամիմ անցանել առանց գէթ կարճառօտ յիշատակութեան: Յայդպիսեաց են Արքունի պալատն, Երեսփոխանական Խորհրդարանն և Դիտարանն աստղաբաշխական:

Արքունի պալատն, զոր կառուցած է Ոթոն Ա. ի հիւսիսային-արևելակողմն քաղաքին, ճըշ-դիւ նման է ձևով մայրաքաղաքիս կայսերական զինանոցին որ ի Մաչքա, ի բարձունս Պէշիքթաշի: Արտաքուստ անշուք է պալատն ամենեին, այնպէս զի մի քանի հասարակաց օթեւանք, որպիսիք են Օթէլ Տանկլըթէր եւ Պրիթանիք, մանաւանդ Պ. Վրայիլաս Արմէնիսի (երբեմն Հելլենական պատուիրակ ի Կ. Պոլիս) ապարանքն դեր ի վերոյ են յոյժ արտաքուստ արքունական պալատն: Պ. Ա. Քօրտէլա, որ արքունեաց ընդհանուր տեսչուհւոյ փեսայն է, հաճեցաւ անդր ևս առաջնորդել տալ զիս ի բացակայութեան թագաւորին և թագուհւոյն, որք, ըստ հանապազօրեայ սովորութեան, յետ կիսաուր յերրորդ ժամու կ'ենեն կառօք կամ հեփոտաս ի պտոյտ: Պահագան ոք արքունեաց կ'առաջնորդէր զիս ի ներքին կողմանս պալատն: Մասնաւորապէս գիտելոյ արժանի են պարահանգիսի սրահն, որ բաւական ընդարձակ դահլիճ մ'է սիւնաղարդ և փառաւոր կարասօք յարդարեալ. գահոյից սենեակն, որ գեղեցիկ է յոյժ ի պարզութեան. ընդունելութեան սրահն, որ մարմարեայ է համակ և կրանիթեայ գոյնզգոյն սեամբք զարդարուն: Նշանակութեան արժանի է նաև մի փոքրիկ մատուռն ի վերին դասիկոնի ուրեք՝

թագուհւոյն յատուկ. զի, որպէս յայտնի է, թագաւորն բողոքական է կրօնիւ. ի գեղեցիկ մատրան անդ արծաթեայ մի մեծ դաշխուրան կայ ձուլածոյ զձեւ խնկամանի, աւազան մկրտութեան արքայազանց, որ ի տես կը մնայ անդ հանապաղ: Չիք այլ նշանաւոր ինչ ի պալատն անդ:

Երեսփոխանական Խորհրդարանն, որ մերձ է ի պալատն արքունի, գեղեցիկ շինուած մ'է յատկապէս կառուցեալ. անփիթատեր ձեւով կը զետեղին երկերիւր նստարանք երեսփոխանաց, և ի հանդիպոյ կան ամբիոն նախագահին, թիկնաթուր դիւանի անդամոց և, առ ստորոտովք ամբիոնին, սեղանք գրագրաց ժողովոյն: Ի վերնայարկս դահլճին կան օթեակք արքունեաց Նորին Վեհափառութեան, պաշտօնէից եւ այլ աւագանւոյ յատուկ. դարձեալ կան մասնաւոր տեղիք կանանց, խմբադրաց եւ հասարակաց համար, թէպէտ ոչ այնչափ ընդարձակ, թերեւս երեք հարիւր հոգւոյ բաւական:

Իսկ Դիտարանն, որ կառուցեալ է ի բարձրաւանդակի ուրեք, ի հարաւային կողմն քաղաքին, չէ ինչ նշանաւոր մեծութեամբ կամ բարձրութեամբ, և ոչ իսկ ճոխացեալ գործ-

եօք . բայց բաւական զօրաւոր է հեռադէտն որ ի նմա՝ գմբեթածեւ շարժուն առաստաղի մի ներքեւ զետեղեալ , որ ութ հարիւր անգամ կը մերձեցնէ զառարկայս . հարիւրաւոր հատորովք լի է փոքրիկ մատենադարանն որ ի նմին՝ աստեղագիտական գրոց յատուկ . իսկ շինուածըն հոյակապ է յոյժ և խիստ գեղեցիկ . դիրքն եղական , որով կը տիրէ բովանդակ քաղաքին վերայ , և հասարակութիւնն հանապազօր կ'ուղղէ իւր ժամացոյցն ի կիսաուր , յորում նշան մի կ'արձակէ Դիտարանն ի բարձուէ :

Որպէս ասացի , 1840ին հաստատեալ է Դիտարանն , ուստի երկնային կարևոր զննութիւնք եղած են ի ձեռն Պ . Բարոնսինօի , նախորդ առաջին աստղաբաշխին և Դիտարանի հիմնադրին , որ մեռեալ է հինգ տարի յառաջ . որպէս և , ի ձեռն Պ . Յուլիոս Սմիթի , արեգակնային բծից զննութիւն եղած է յաճախ աստ ուրեմն ի վերջին ժամանակս :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Ուսումնական և բարեգործական հաստատութիւնք բազմաթիւ եւ բազմապիսի են առ Սթենացիս և առ Հելլէնս առ հասարակ : Ըստ ճշգրիտ տեղեկագրութեանց Պ . Մանսօլայի , զոր ծանեաք ի վեր անդ , յառաջագիմական եւ

մարդասիրական հաստատութիւնք ակնածելի թիւ մի կը կազմեն ի Յունաստան : Գլխաւոր ուսումնական հաստատութիւնք կրկին են , Միութիւնք ( syllogue ) եւ Մրցութիւնք ( concours ) :

Ի մէջ այլոց նշանաւոր է յոյժ Միութիւնն որ հաստատեալ է յՍթէնս ի նպաստ զարգացման յունական դպրութեանց , յամին 1869 : Սոյն Միութեան գլխաւոր նպատակն է՝ երկսեռ դըպրոցներ հաստատել ի բուն Յունաստան և ի Թուրքիա , ի տարածումն նախնական կրթութեան լաւագոյն ուղղութեամբք :

Միութիւնն իբր հինգ հարիւր անգամ ունի , և , մի քանի տարի յառաջ , նախնական դպրոց մի հաստատեց յՍթէնս , եւ այլ բազմաթիւ դպրոց աստ և անդ . քսան և եօթն դպրոցաց , թէ ի Յունաստան և թէ ի Թուրքիա , օգնութիւն մատոյց և մի վարժապետանոց հիմնեց յՍթէնս ի պատրաստութիւն նախակրթական ուսուցչաց . ի լոյս ած բազում գրեան և հազարաւոր հատոր բաշխեց դպրոցաց . ուրեք ուրեք մրցութիւն հաստատեց Յունարէն լեզուի և այլ զանազան արուեստից և գիտութեանց : Այս Միութիւնն ունի գրեթէ 200,000 ֆրանքի ստացուածս . եկամտն է 150,000 ֆրանք , և ծախքն՝ իբր 65,000 ֆրանք ի տարւոյ :

Միութիւն Ուսուցչաց , հաստատեալ յամին

1873, որ ունի այսօր աւելի քան զվեց հարիւր ընկերս յամենայն կողմանց Յունաստանի. նպատակն է՝ Բարուքել տակաւ զուղղութիւն նախնական և միջին կրթութեան և օգնել անպաշտօն ուսուցչաց և նոցին ընտանեաց (\*):

Այս օրինակ օգտաւէտ միութիւնք բազմութիւ են ամենուրեք, և յոյժ երկար կը լինի մի ըստ միոյն խօսել զայնպիսեաց եւ զնոցին գործոց:

Իսկ մրցութիւնք որ ի Յոյնս՝ հաստատեալ են յերեսուն ամաց հետէ, ի շնորհս բարեկամաց դպրութեան, ի քաջալերութիւն և ի մղումն մտաւոր և բարոյական զարգացմանց: Գլխաւորք ի մրցութեանց են հետագայք.

Բանաստեղծական Մրցութիւն, սահմանեալ յամին 1850, որ կը կատարի ամ ըստ ամէ.

Բանասիրական Մրցութիւն, կարգեալ յամին 1860, որ կը կատարի երկամեայ շրջանաւ.

Թարգմանութեան Մրցութիւն, հաստատեալ յամին 1872.

Մրցութիւնք երիտասարդ բանաստեղծից, երգահանաց, բարոյագիտաց, պատմաբանից, այլովքն հանդերձ, որք կը կատարին միամեայ կամ երկամեայ շրջանաւ:

(\*) Մեր հոգեւոյս վարժապետական միութիւնն յուշ կը լինի ինձ աստ, որ ի խանձարուրս վախճանեցաւ սոփք ինչ յառաջ . . . . :

Իսկ բարեգործական հաստատութիւնք նախանձելի օրինակաւ բազմութիւ և ծաղկեալ են ի Յունաստան: Միայն երկոտասան հիւանդանոցք կան յայլ և յայլ քաղաքս, գլխաւորքն՝ յԱթէնս, ի Պիրէոն, ի Շիրա, ի Չանթա: Եօթն աղքատանոցք, — մին յԱթէնս, մին ի Բաթրաս, մին ի Շիրա, մին ի Քորֆու, մին ի Չանթա և երկուքն ի Քէֆալոնիա: Վեց որբանոցք, — երկուքն յԱթէնս, մին ի Բաթրաս, մին ի Քորֆու, մին ի Քէֆալոնիա և մին ի Չանթա: Երկու յիմարանոցք ի Քորֆու, որոց մին արանց և միւսն կանանց: Մի դարմանոց աչացաւ յԱթէնս: Մի բորոտանոց ի Կիւմ: Երկու գրաւատունք, մին ի Քորֆու եւ մին ի Քէֆալոնիա, և այլ բազում նոյնպիսիք:

Մասնաւոր յիշատակութեան արժանի է յԱթէնս արու մանկանց որբանոցն, գործ գերագոյն մարդասիրութեան, որ հիմնադրին անուամբ կը կոչի Որբանոց Հաճի Քօսթայի: Այս հաստատութեան մէջ կը պատուարին այսօր աղքատիկ տղայք առաւել քան զհարիւր. որք, բաց ի նախակրթութենէ, մասնաւորապէս կուսանին դարբնութիւն, դերձակութիւն, կօշկագործութիւն և այլ արուեստս ինչ ընդ խնամով քսանից ժողովոյ մի: Բարերար հիմնադիրն 175,000 ֆրանք կտակած էր, յամին 1856, ի շինութիւն որբանոցին. բայց այժմ ստաց-

ուածքն առաւել է քան զմիլիոնն մի ֆրանք :  
Խիստ ընդարձակ է շէնքն , որ կարէ բովան-  
դակել մինչեւ երեք հարիւր գիշերօթիկ :

Նոյնքան նշանաւոր է մատաղ աղջկանց որ-  
բանոցն յԱթէնս , հաստատեալ յամին 1855 :  
Որք աղջկունք , ընդ խնամով տիկնանց մաս-  
նաժողովոյ մի , կը սնանին , կը հանդերձին եւ  
կը կրթին նախնական ուսմամբք . յետոյ , երբ  
հասակաչափ կը լինին , յետ աւարտելոյ զըն-  
թացս ուսմանց , դրամական օգնութիւն մի կը  
ստանան ի դրամագլխէն որ գոյացեալ է եւ  
կ'աճի տակաւ վաճառմամբ ձեռագործաց որ-  
բոցն , և կը թողուն զորբանոցն : Այս հաստա-  
տութիւնն 1,500,000 ֆր . ի ստացուածս ունի .  
տարեկան ծախքն կիսով չափ գրեթէ նուազ է  
քան զեկամուտն , որ կը հասնի մինչեւ 145,000  
ֆրանքի :

Եւ բայց յայտցանէ , մարդասիրական կամ ու-  
սումնական հաստատութիւնք չպակասին դեռ  
ընդ ամենայն Յունաստան . բայց չկամիմ այլ  
եւս յամել ի մասին աստ , զի համառօտ պիտի  
լինէր իմ ուղեւորութեան նկարագիրն :

ԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ

Իսկ Յունաստանի կրթական ընդհանուր վի-  
ճակն . . . . :

Ուշ ի կուրծս եւ առանց իրիւք խղճելոյ , բա-  
րեկամք յառաջադիմութեան , կամիմ ասել ձեզ  
ի մի բան՝ թէ ՅՈՅՆՔ ԳԱՐ ՄԻ ԿԱՆԽԱԾ ԵՆ  
ԶՀԱՅՍ Ի ԲԱՂԱՔԱԿՐՈՒԹԵԱՆ :

### ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի ՊԻՐԷՆՆԷ ՅԶՄԻՒՌԻՆ . Արեւիկեղազոս . —  
Քիոս :

ԱՐԵՒԿԵՂԱԳՈՍ

Մեկնեցաք ի Պիրէննէ , յՍ ապրիլի ընդ ե-  
րեկս , ի Զմիւռին : Խաղաղ օդ , հանդարտ ծով  
և պայծառ երկինք զբօսուցիկ նաւարկութիւն  
մի կը խոստանային մեզ ընդ լրթագոյն ան-  
դունդս Արշիպեղազեայ : Գեղեցիկ է Արշիպե-  
ղազոս ի գարնան , մանաւանդ զի գարունն  
արդէն հասարակեալ էր ի կողմանս անդ : Կա-  
նաչադեղ և ծաղկաւէտ կզգեկաց հոյք կը  
սփռին ցիր և ցան ի ծովածոցին Աթենայ , եւ  
ի ջուրս անծուփ ծովուն կը կրկնին անդրէն  
պատկերք նոցա ի յետին շողս արեգական , որ  
ի մուտս խոնարհելով կը սուզի առ սակաւ  
յանդունդն մեծատարած՝ բոցագոյն պայծա-

ուութիւն մի թողլով յերկինս ի վեր: Ընդ այնս կ'անցանէր շողեհաւ մեր, Տանուպիօ, յետս կոյս լքաներով զափունս Ատաիկեայ, որք ի բաց հեռացեալ տակաւ աներեւոյթ եղեն յաչաց:

Կը յուսայի սակաւ ինչ դիւր առնել իմ հինգօրեայ սաստիկ խոնջութեանց. — զի յայնչափ սուղ ժամանակի կարացի դառնալ երկցս շուրջ զԱթենաւ. — բայց ահա Պոսիդոն, որ կը սիրէ կատակել զորդւովք մարդկան, յարոյց յանկարծ բռնաշունչ հողմ հարաւոյ, եւ մենչող ալիք ուժգինս կը բախէին զկող մեր ծերունի շողեհնաւին, որ, իբրև մի շիւղ յարդի, կը ծփայր ի մկանունս լեռնակոյտ կոհակաց: Յանդէպս արդեօք յիշեցի զՍողոմոն, որ կ'ասէ. « Չնչին փայտի հաւատան մարդիկ զանձինս: » Բայց գեղապանձն Աստղիկ (\*) անշուշտ պիտի հնարէր ողորբել յանոյշ հրապոյր զանողորբին Պոսիդոն, որոյ կատակն երբեք ակորժելի չէ ինձ:

Ք Ի Ո Ս

Յետոյ ուրեմն, թէպէտ անքուն և անսուաղ, ժամանեցաք ի Քիոս: Անդ կը դադարէր իշխանութիւն ծովականին, բայց կը սկսէր ան-

(\*) Venus. — այսպէս կ'անուանէր այն շողեհնաւն հոյակապ որով գնացի սաստի ցՊիրէոն:

դէն պետութիւն դժոխականին. Պղուտոն մերձեցած էր ի Քիոս, եւ իւր հրեղէն անդունդք փոքր մի ևս՝ և պիտի կլանէին զչարաբաստիկ Քիացիս, կղզեաւն հանդերձ գուցէ: Դեռ եւս կը սասանէր երկիրն ընդ ոտիւք, թէպէտ մեղմով. այսպէս թեթեւ սասանումն կը զգայի, երբ, — անշուշտ անխոհեմ հետաքրքրութեամբ, — ելի արտաքս ի ցամաքն հանդերձ երկու ընկերօք, և իբր կէս ժամ կարացաք շրջել յողբալի աւերակս Քասթրօի, որ է զըլխաւոր քաղաք և նաւահանգիստ Քիոսի: Աւերածն աղետալի է յոյժ. չիք անդ եւ ոչ մի շինուած անփուլ կամ անվասս. անպիտան են բոլոր բնակութիւնք տեղւոյն: Արդէն գարչելի ժանտահոտութիւն մի կը բուրէր ընդ հանուր, որ մանաւանդ զգալի կը լինէր մեզ ի նաւին, երբ կը մերձենայաք ի նաւահանգիստն. մարդկեղէն արարածոց հարիւրաւոր մարմինք, կը սոսկամ ասել, կը նեխէին այն փլատակաց ներքեւ յաւուրց հետէ . . . . մա՛րք էին գուցէ նոքա, գուցէ հարք, գուցէ եղբարք, գուցէ մանրիկ տղայք, գուցէ աղջկունք, գուցէ նորհարսունք . . . . ո՛հ, քանի՛ անողորմ է Պղուտոն. անէ՛ծք նմա: — Այլ օրհնութիւն մարդասիրաց որ փութացան ամփոփել գէթ զմնացորդս ժողովրդեանըն: Օսմանեան, անգղիական, իտալական եւ այլ ազգաց շողեհաւք, որպէս նաեւ բազմա-

Թիւ պարենաբարձ առադաստաւորք, կային անդ ի խարսխի՝ անշուշտ յօգնութիւն եկած դժբախտ Քիացւոց:

Քայց ահա կը սուլէր շողենաւն ի չու. դարձաք փութով ի նա եւ մեկնեցաք ի Զմիւռին, որ հեռի չէ ի Քիոսէ քան զութ ժամ: Հասաք անդր զկէս գիշերաւ:

Մ Ա Ս Ն Բ.

Ի ԶՄԻՒՌԻՆ. Քարափուցք Զմիւռնիոյ. — Ազգային եւ օսարագի կրթական հաստատութիւնք. — Ազգային Հիւանդանոց. — Գեր. Մեկիսեղեկ Սրբազան. — Հայազգիք ի Զմիւռին:

ՔԱՐԱՓՈՒՆՔ ԶՄԻՒՌՆԻՈՅ

Զմիւռին կառուցեալ է համանուն ծովածոցին վերայ, որ, ընդարձակ եւ գեղեցիկ գոլով հանդերձ, անքոյթ նաւահանգիստն է քաղաքին: Դիրք, ընդարձակութիւն եւ շինուածք Զմիւռնիոյ ծանօթ են բազմաց, և չէ հարկ զայդցանէ խօսել ինձ աստ երկարօրէն: Քայց Քարափունքն (quai) երեւելի է յոյժ թէ՛ իբրև

կարևոր գործ և թէ՛ իբրև գեղեցկագոյն շինուածք քաղաքին: «Սպաբոտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ» գուցէ ասել պատշաճ լինէր սակաւ ինչ ամօք յառաջ այդ մեծածախ շինութեան համար, մինչդեռ չկային գրեա թէ ոչ բարեշէն պողոտայք, ոչ բարևք ճաշակաւ յօրինեալ վաճառանոցք կամ շինութիւնք առ հասարակ, զորպիսիս սակայն կը տեսանես այժմ ուրեք ուրեք ի Զմիւռին, և որպիսիք, ըստ ասելոյ տեղացւոց, կը բազմանան գամ քան զգամ ի քաղաքին: Երկայն է յոյժ Քարափունքն, եւ չկարծեմ թէ կարէ ոք հետիոտս գնալ ընդ այն ի միում ժամու. իսկ լայնութիւնն ընդհանրապէս քսան կանգուն և է զի առաւել է քան զերեսուն: Քարափունքն իւր բովանդակ երկայնութեամբն յօրինեալ է քառակուսի որձաքար վիմօք և այնպէս իմն հաստատուն հիմամբք, մինչև անցանել ընդ այն յապահովս երկաթուղւոյ կառախմբի եւ հանրակառաց (Սրաւնռէյ): Անդղիացի ոք, զոր չստուգեցի յանուանէ, ի գլուխ տարած է զայդ մեծագործ շինութիւնն և մեծագումար դրամ կը շահի ի տրոյն. հնարիմաց եւրոպացին կարէ իրաւամբ օրինակ լինել մեր հայազգի շատ մեծատանց որ կը ննջեն հանդարտօրէն ի դրամադլուխս ոսկւոյ: Գեղեցիկ շինուածք քաղաքին, տունք հասարակաց, պանդոկք, զբօսարանք, այլովքն

հանդերձ, բազմաթիւ են ի Քարափունս անդ, և համարեա թէ ուղիղ գծիւ կ'երկարին ծայր ի ծայր, որով յոյժ վայելուչ կ'երեւի Քարափունքն ի բացեայ, մանաւանդ ի գիշերի, յորում կաղային լապտերաց կը շողայ լոյսն ընդ ամենայն երկայնութիւն Քարափանցն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐԱԶԳԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՔ

Գլխաւորք ազգային կրթական հաստատութեանց որ ի Զմիւռին՝ են Ս. Մեսրոպեան եւ Ս. Հռիփսիմեան վարժարանք: Թէպէտ զատկական պարագոյ աւուրց պատճառաւ փակեալ էին բոլոր կրթական հաստատութիւնք քաղաքին, բայց ես կարացի տեղեկութիւնս ինչ ստանալ ի ձեռն բարեկամաց ոմանց, և ուրեք ես անձամբ զնացի յայց, թէ և խիստ սուղ էր ժամանակս:

Ս. Մեսրոպեան և Ս. Հռիփսիմեան դպրոցք նախնական վարժարան են այժմ՝ ընդ տեսչութեամբ Մամուրեան էֆէնտիի: Առաջինն ունի երեք բաժանումն, Ընտելարան, Նախակրթարան և Ռեստըմնարան, երեքին ի միասին եօթնամեայ շրջանաւ:

Նախնական վարժարանի մէջ բոլոր ուսանելի աւարկայք, նաև Տնտեսագիտութեան և Անգլ-

ղիերէն լեզուի ուսմունք, կ'աւանդին խնամով Մեսրոպեան վարժարանի մէջ, յոր կը յաճախեն իբր երկու հարիւր և յիսուն թուով աշակերտք: Երկրորդն (Հռիփ. վարժ.) նոյնպէս ունի երեք բաժանումն՝ ութամեայ շրջանաւ. բաց ի Թուրքերէն և Անգղիերէն լեզուաց, աստ եւս մի և նոյն ուսմունք կ'աւանդին, նաեւ Ասեղնագործութիւն, իբրև աղջիկ տղայոց յատուկ: Հռիփսիմեան վարժարանի աշակերտուհիք առաւել են թուով քան զերկու հարիւր և յիսուն:

Երկու վարժարանաց ևս թէ՛ ուսմանց ծրագիրք եւ թէ՛ ներքին կանոնք կարեն իրաւիւն նախակրթութիւն տալ երկսեռ տղայոց, մանաւանդ թէ Մամուրեան էֆէնտիի տեսչութիւնն մեծազոյն երաշխիք մ'է վարժարանաց ծրագրին անթերի գործադրութեան:

Ամերիկեան դպրոց (Բողոքական հայոց) այս վարժարանն է ընդ տեսչութեամբ Պ. Յակոբ Կոստանդեան ուսումնական երիտասարդին. կը յաճախեն այսր երեսնի չափ աշակերտք, որոց կ'աւանդին բոլոր տարերք նախակրթութեան, ի մասնաւորի՝ Անգղիերէն լեզու:

Սֆոյ Սֆոյ (սկովտիական դպրոց) ընդ տեսչութեամբ Պ. Ա. Սբաթհի, որ ի քսան ամաց հետէ կը վարէ զայն օգնութեամբ նպաստամատոյց ընկերութեան իրիք և մասամբ թոշակօք աշակերտաց, որոց թիւն է գրեթէ երեք

հարիւր ընդ արու և ընդ էդ : Ընդարձակ է շէնքն և հոյակապ . բայց չունի յարմարութիւն վարժարանի :

Բայ յայսցանէ , կան նաև մի քանի կրթական հաստատութիւնք , նշանաւոր և աննշան , զորոց չեղեւ ինձ տեղեկութիւն ստանալ յերկօրեայ ժամանակի կամ անձամբ գնալ յայց յոր և արժանն էր :

ԱԶԳԱՅԻՆ ՇԻՒԱՆԴԱՆՈՑ

Աղգային Հիւանդանոցն որ ի Զմիւռին՝ բարեգործական պանծալի հաստատութիւն մ'է , պատուաբեր ամենայնիւ նորին բարերար հիմնադրաց : Ես որ ամբաւ տենչանօք կը շրջէի՝ պարծանաց արժանի հայկական հաստատութիւն մի տեսնելոյ համար ի Զմիւռին , յանհունս բերկրեցայ , երբ գնացի յայց այդ ողորմածութեան նորակառոյց յարկին , որ սերտիւ կը միացնէ զաղնիւ զգացումն գթութեան ընդ անուն Սպարթալեան մեծաշուք գերդաստանին :

Ոչ այնչափ ընդարձակ շինուածքն՝ որչափ կանոնաւոր է շինութիւնն և յարմարագոյն հիւանդանոցի հաստատութեան : Վայելուչ են յոյժ կահ կարասիք , մահճակալք և անկողինք , սպասք սեղանոյ և անօթք խոհանոցի , այլովքն հանդերձ . ամենուրեք շրջեցայ , և ամենուրեք

տեսի դոհացուցիչ կարգաւորութիւն և վերջին աստիճանի մաքրութիւն , հանգամանք՝ որ ոչ նուազ պատիւ կը բերեն նաև ինամատար վարչութեան :

Եօթանասնի չափ պատսպարեալք կային յայնժամ ի ներքոյ այդ գթութեան յարկին , որ սակայն բաւական է առնուլ ընդ իւրեւ առաւել քան զհարիւր և յիսուն հոգիս : Ի նոսա , ընդ այր և ընդ կին՝ երկոտասան հիւանդք , փոքր մի թուով առաւել խելագարք և մնացեալ պատսպարեալք էին ընդհանրապէս անկեալ անօգնական ծերունիք , զառամեալ անտերունչ պառաւք եւ այլ նոյնպիսիք (\*) :

Խիստ հովասուն է Հիւանդանոցի դիրքն՝ արձակ պարտէզ ունելով շուրջանակի : Օդ և ջուր մեծադոյն դարմանք են հիւանդ մարմնոյ՝ ըստ բացարձակ օրինաց բժշկութեան , և աղբուութեամբ չզօրեն դեղք բժշկի՝ առանց օդոյ եւ ջրոյ օգնութեան . բայց ես չկարացի ստոյգ ինչ իմանալ զջրոյն զոր կուտան անդ պատսպարեալ հիւանդաց , մինչ օդ Հիւանդանոցին ա-

(\*) Մարդ սրբան կը ցանկայ մեծատուն լինել եւ այսպիսի մարդասիրական շինուածոց հիմնադիր լինելոյ փառաց արժանանալ՝ ի հանդէս իւր բարեսիրական զգացմանց , զոր գործով եւեթ անշուշտ կարէ ի յոյտ ածել , եւ ոչ բանիւ լոկով՝ ըստ տիրող սովորութեան առ մեզ . . . :

առողջարար յոյժ թուեցաւ ինձ քան զայլ հասարակ տեղեաց քաղաքին . զի Զմիւռնիոյ հասարակաց ջուրն, — ընդհանրապէս ջրհորի, — առողջ մարդոյ իսկ չէ օգտակար, թող թէ հիւանդաց :

Մի փոքրիկ մատուռն որ ի պարտիզին՝ յառկապէս կառուցեալ է Հիւանդանոցի պատըսպարելոց համար, և եկեղեցական պաշտամունք կը կատարին անդ ըստ աւուր պատշաճի :

Հիւանդանոցի մատակարարութեան ծախքն կը հայթայթի՝ ըստ մեծի մասին ի սեպհական կալուածոց և մասամբ նպաստիւք նուիրատուաց, նաև դարձեալ անշուշտ հանապազօրեայ հոգածութեամբք առատաձեռն հիմնադրաց : Հուսկ ուրեմն, այս ազգային գեղեցիկ հաստատութիւնն, որ օտարազգեաց իսկ նախանձելի կը թուի թերևս, Զմիւռնաբնակ հայոց, եթէ ոչ միակ, գէթ առաւելագոյն պարծանաց մին էր իրաւամբ՝ ի շնորհս Սպարթալեան վսեմաշուք հարազատաց :

ԳԵՐ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ՍՐԲԱՋԱՆ

Զմիւռնաբնակ ազգայնոց պարծանաց մեծագոյնն է սաուդիւ իւրեանց Առաջնորդ Հայրն, Գեր. Մելքիսեղեկ Արքեպիսկոպոս, Հայաստանեայց եկեղեցւոյ այս ընտիր պաշտօնեայն,

լուսոյ եւ յառաջագիմութեան այս գործունեաց բարեկամն, յորպիսիս նաև հանրութիւն ազգին կարէ պարծել իրաւամբ : Հմտութիւն և ձեռնհասութիւն այս անսոգիւտ եկեղեցականին գեր ի վերոյ են ամենայն խնդրոյ և շունին պէտս իմ անզօր դրուատեաց :

Իբրև սիրոյ և խաղաղութեան պաշտօնեայ, սիրելով զիւրսն և սիրելի գօլով իւրոցն՝ յաջողած է նա այս չքնաղ հանգամանօք տեական խաղաղութիւն հաստատել յիւրում հօտի . եւ իբրև ձեռնհաս առաջնորդ՝ իմաստուն խորհրդովք յաջողած է պատկառելի լինել աւագաց և փոքունց, որպէս նաեւ օտարաց առ հասարակ, յօգուտ իւր ժողովրդեան :

Յիրաւի անձուկ է շրջանակն յորում կը գործէ Գեր. Մելքիսեղեկ Սրբազան . բայց վարչական գործոց ընդարձակութիւնն չէ որ կը չափէ զկարողութիւն վարողին, նաեւ ոչ նոյն իսկ յաջողութիւնն որ կախումն ունի զհանգամանաց տեղոյն և ժամանակին . այլ վարելոյ բարւօք եղանակն է անշուշտ որ կը կացուցանէ զարժանիս վարչին յոր եւ իցէ գործ : Սակայն, ցաւօք պարտիմասել, թէ յայսմ մասին չէ մարթ բախտաւոր համարել զՍրբազան Առաջնորդն . կամբք գիտել զվասնէրն . . . :

ՀԱՅԱԶԳԻՔ Ի ՉՄԻՌՈՒՄ

Բայց նախ հարկ է ասել՝ թէ արդեօք զմիւռնայի ազգայինք ևս պարծանք են Գեր. Առաջնորդ Սրբազանին, որպէս է ինքն նոցա . . . .

— Ես չկարծեմ: Ահա այն ատուր եզրակացութիւնն յոր յանգել կուտան ինձ այն ամենայն տեղեկութիւնք զոր ստացայ անդ յոմանց եւ զորս կը ստանամք յաճախ ի թղթակցաց Մասսի և այլ լրագրաց:

Ազգասիրական զգացմունք համարեա թէ չգոյութեամբ կը փայլին յազգայինս Զմիւռնիոյ, եթէ աննշան բացառութիւնս ինչ չընեմք ի համարի. ազգային լեզուի և ընդհանրապէս ազգայնութեան նախանձախնդրութիւնք, որպէս առ բազումս ի մէնջ, չունին մեծ ինչ նշանակութիւն և առ զմիւռնացի հայազգիս: Օտարախօս լինելոյ մոլութիւնն հանրական սովորութիւն մի դարձած է անդ առ հայ ընտանիս (\*).

(\*) Եւ այս ոչ միայն առ զմիւռնաբնակ մերազնեայս, այլ եւ առ կոստանդնուպոլսեցի ազգայինս է սյսպէս, մանաւանդ առ հռովմէական ընտանիս: Այս դուն ուրեք ձաղկեալ մոլութիւնն մին է այն մեծագոյն դժբախտութեանց զոր մեր շատ ազգայինք իւրեանց ձեռօք կը յաւելուն ի վիշտս ազգին: Ես չիմանամ թէ զինչ կամին ցուցանել, զոր օրինակ, թուրքերէն խօսելով այն հայ ընտանիք որ գիտեն խօսել հայերէն, կամ որք կարէին

մինչև իսկ կը հաւաստեն՝ թէ մի յոյն սպասուհի բաւական է այս կամ այն ընտանեաց բոլոր անդամոց մոռացնել տալոյ զիւրեանց մայրենի լեզուն ի սուղ ժամանակի՝ յունարէն խօսել տալով նոցա հանապազ. կը խորչիմ ասել ստորկութիւն, բայց նուաստութիւն մ'է այս կամաւոր, որ ոչ իւր կ'արդարանայ, զոր կը դատապարտէ բոլոր քաղաքակիրթ աշխարհն եւ որ նողկալի չլինի միայն ոչ-ազգասէր հայոյ: Եթէ զայս ևս նորաձեւութիւն մի կը համարին ոմանք, կը փութամ ասել թէ ինքեանք իսկ գլխովին նորաձեւութիւն են առաջի աշխարհի:

Հայ երիտասարդութիւնն ի Զմիւռնի մեծագոյն մասամբ անտարբեր գոլով ընտանեկան

եւ կարեն ուսանել հայերէն, կամ երբ չիք հարկ բնաւ խօսել թուրքերէն, նա թէ ուր հարկ է խօսել հայերէն. ես չհասկանամ թէ է՞ր արդեօք հռովմէական ազգայնոց վերապատուելի հարք, — թէ եւ բացառութեամբ, — թուրք լեզուաւ կը խօսին ընտանեաց մէջ յաճախ, միմեանց հետ յաճախ, մինչև իսկ կը քարոզեն մերթ թուրք լեզուաւ, երբ նաեւ հարկ չկայ, եւ ամենայն անտարբերութեամբ պատասխանի կուտան թուրք լեզուաւ մի հայ կնոջ որ կը հարցնէ. «Վարդապետ, ժամանն ընդ կեղիցօրսընդ. ձայնաւոր պատարադ պիտի մի. — Էլիկք, «մատամ» (այս ալ Ֆրանսերէն.) ձայնաւոր պիտի տես, թիւրքե պաշտակցոյս. . .» կը մղձկի մարդ ի լուր այս օրինակ խօսակցութեան

կենաց քաղցրութեան, կրկին չարեաց պատ-  
ճառք կը լինի. նախ այն թէ, իբրև բնա-  
կան հետեւանք անսահման ամուրիութեան,  
բարոյական զեղծմունք կ'աճին մեծապէս. եւ  
երկրորդ անգամ այն՝ զի հայ օրիորդք, նաեւ  
պատուական աղջկունք, անամուսին կը մնան

մեր հայ ընտանեաց: Մանաւանդ թէ դիտած էք  
քանի տգեղ եւս կը լինի թուրքերէն զեղեցիկ լե-  
զուն հայ կանանց ձախող կիրառութեամբ, եւ քա-  
նիօն տգեղ կը լինին ինքեանք թուրք լեզուաւ,  
զոր, ո՛չ թէ, բնաւ չգիտէին բառբառել: — Բայց  
ո՞յց է մեղ. կանանց թէ արանց, եթէ չէ երկո-  
ցունց: Միթէ նախատինք չէ՞ այս մեր աղգայնու-  
թեան առաջի օտարաց, եւ ի՞նչ կարեն այդպիսիք  
ի չքմեղս հանել զինքեանս:

Գարձեալ զիտելի է զի որ եւ է յայտարարու-  
թիւն որ չպատկանի աղգային պաշտօնական մարմ-  
նոց կամ ընկերութեանց՝ գողցես օրէնք եղած է  
առ մեզ հայերէն գրով եւ քուրֆ լեզուաւ հրատա-  
րակել, թէ եւ յայտարարութեան տէրն հայ եղած  
լինի, այնպէս զի հասարակային մեծ ընկերութիւնք,  
Շիրքէթի-Նայրիէէ, Թրամուէյի ընկերութիւնն եւ  
այլք, զրեթէ միշտ հայ հասարակութեան համար  
թուրքերէն կը հրատարակեն որ եւ է ծանուցումն,  
ուր միւս աղգաց իւրաքանչիւրն իւր բնիկ լեզուաւ  
կ'ընթեռնու գայն ի նմին թղթի...: Արդեօք Հայք  
բնաւ չգիտեն զիւրեանց լեզուն, կամ այսչափ կ'ա-  
տեն գայն. եթէ ո՛չ այս եւ ոչ այն, զի՞նչ անուր  
տալ պարտ է ուրեմն նոցա որ չյարգեն զլեզու մեր  
մայրենի. — ես չկամիմ ստել ինչ:

ի տան, և վնասեայն կը լինի միշտ ազգն, որ  
կը տուժէ ե՛ւ նիւթապէս ե՛ւ բարոյապէս:

Պճնասիրութիւնն այլ, որպէս ի Կ. Պոլիս,  
հանրական սովորութիւն մի դարձած է առ  
զմիւռնաբնակ աղգայինս: Պճնասիրութիւնն ա-  
ռաջին կարգի օրինակելի միլութիւն մ'է ըստ  
ինքեան, և ես չըմբռնեմ բնաւ թէ զի՞նչ կամին  
ասել նոքա որ, յանուն քաղաքակրթութեան և  
յանուն բարուք ճաշակի, կը դովեն գայն և կը  
քաջալերեն: Ամէն ոք կը հասկանայ անշուշտ  
զի, ըստ պահանջմանց ժամանակիս, մեր կա-  
նայք և օրիորդք պարտին վայելչասէր լինել,  
բայց ոչ պճնասէր. զի այլ է սա եւ այլ է նա,  
և թէ զի՞նչ խտիր դոյ ընդ մին և ընդ միւսն,  
զայդ ըմբռնելոյ համար չեն պէտք բնաւ ամե-  
նիմաստ հանճարոյ:


Կը հաւաստեն դարձեալ՝ թէ հայ ծնողք  
3,000 ոսկւոյ գումար մի կը ծախսեն ի տարւոյ  
իւրեանց զաւակաց նաև նախնական դաստիա-  
րակութեան համար յօտարազգի դպրոցս: Թէ  
գոնէ նախնական կրթութիւնն հարկ անհրա-  
ժեշտ է զի աղգային լինի լոկ՝ թէ ոչ, բոլոր  
աշխարհ կարէ մեզ օրինակ լինել. իսկ թէ զայդ  
3,000 ոսկւոյ գումարն յումպէ՛տս կը վատնեն  
զմիւռնացի հայ ծնողք՝ թէ ոչ, բաւական է  
ինքեանց լսել միայն Ս. Առաջնորդին հանա-  
պազօրեայ քարոզիցն և յորդորակաց, զոր ամէն


առթիւ , որպէս ասաց ինձ Ն . Սրբազնութիւնն ,  
չվարանի խօսել յատենի եկեղեցւոյ և այլուր .  
եւ , որպէս այլք կը հաւաստեն , ազգոյ եղա-  
նակաւ կը ջանայ հանապազ զգացնել տալ իւր  
հօտին որ և է թերութիւն որ արդեւ կը լինի  
նիւթական և բարոյական զարդացմանց :

Եւ ես յուսով եմ զի Զմիւռնիոյ Հայք , իբրև  
ծաղկեալ քաղաքի մի բնակիչք , ընդ հովանա-  
ւորութեամբ իւրեանց իմաստուն Առաջնորդին ,  
ոչ ևս պիտի յամեն զգործ ազգային յառաջա-  
դիմութեան յօգուտ իւրեանց և ազգին ընդ-  
հանրապէս , ի պարծանս Ս . Առաջնորդին և  
յօրինակ այլ քաղաքաց Փոքուն Ասիոյ : —

Այսու յուսով , յետ երկօրեայ ժամանակի ,  
մեկնեցայ ի Զմիւռնիոյ , եւ յուսալիցն էսրէրօ  
դարձոյց զիս անդրէն ի ցանկալի ափունս  
Վոսիորի :







« Ազգային գրադարան



NL0248500



Համանաւ Հասարակաց Գրծութեան Ժողովոյ